ՄԱՅԻՍ



№ 3 ՄԱՐՏ 1895

Ա Ղ Բ Ի Ւ Ր

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ԵՒ

ՅԱՒԵԼԻԱԾՈՎ

Դաստիարակների համար

ՏԱՍՆԵՒԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

№ 3

ՄԱՐՏ

ԹԻՖԼԻՍ
Типографія Груз. Изд. Т—ва. Տպար. վ.քաղ Հրատ. Ընկ.
1895

Дозволено цензурою, Тифлисъ, 16-го марта 1895 года.

ՊԱՏԳԱՄ



Այս ինչ դիւթական
Զեփիւռ է հնչում,—
Կեանքը վերածնում է
Մամուռի մէջից,
Դարևոր ծառեր
Կանաչ զգենում,
Եւ կարմիր վարդը
Ծպտում կոկոնից։

Հեռու լեռներից—
Մանուկ աշխարհից
Անոյշ հովեր են
Սուրալով գալիս,
Շունչ, կենդանութիւն
Ծայրերի կրծքից
Խլում և բերում
Մեզ ոգի տալիս։

Նորից և նորից
Դարերից խլած
Վերածնութեան
Ծագում է մի յոյս,
Ո՛հ, ինչ վեհաշունչ
Պատգամ է հասած—
Կեանք, սէր և կորով—
Կարմիր արշալոյս...

ՍՐԻՆԳ

Ա Զ Ն Ի Ւ Ը Ն Կ Ե Ր Ը

(Ժող. առակ)

Գայլն անուշն է դուրս եկել,
աղէկն աշխարհ քանդեց։
(Ժող. առած)

I

Գայլը, արջն ու աղէսն ընկերացան և սկսեցին աշխատել, պաշար ժողովել, որպէս զի ձմեռը քաղցից չըմեռնեն։ Նրանք իրանց ձեռք բերած ամենօրեայ որսից քիչ քիչ խնայելով մի կարաս *ղաւուրմայ**) պատրաստեցին և իրանց որջի մօտ մի ապահով տեղում թաղելով որոշեցին բաց անել միայն այն ժամանակ, երբ սաստիկ ցրտերի ու ձիւնի պատճառով անկարելի կըլինի որս ձեռք բերել։ Նրանց օրը բաւական ուրախ էր անցնում. ամեն օր երեքը միասին դուրս էին գալիս որսի և կուշտ փորով վերադառնում իրանց որջը։

II

Աշունն էր,—դուրսը ցուրտ, թէ՛ սէտ որս դեռ կարելի էր անել։ Մի օր, երբ

*) Իւղի մէջ տապակած միս։

երեքը միասին շարւած-նստած՝ խորհում էին իրանց արշաւանքի մասին, աղւէսը, որպէս թէ մէկը իրան կանչելիս լինէր, «Հ՛ը» արեց:

—Ի՞նչ է, աղւէս եղբայր, հարցրին գայլն ու արջը, ո՞ւմ հետ ես խօսում:

—«Ոչինչ, սանահէր Գիքօն ինձ հրաւիրում է իրանց տունն, հարսը տղայ է բերել, ասում է՝ սրի երեխան մկրտի:

—Այդ լաւ է, վրաբերեցին երկու ընկերները, գնա՛ ինքդ կե՛ր, մեզ համար էլ բաժին բե՛ր:

Աղւէսը գնաց: Ճանապարհը ծռելով, մտաւ մառանը և բաց անելով թաղած կարասի բերանը՝ կուշտ կերաւ ղաւրմայից և ապա կրկին ծածկելով, վերադարձաւ ընկերների մօտ և խիստ չարգւածի նման դեմքին տարածելով, մրթմրթաց.

—Այ անիծւին շները, անիծւի՛ն. չեն թողնում, որ մարդ անցնի մօտերքով, դեռ գիւղից դուրս չեկած՝ թափւեցին վրաս և քիչ էր մնացել, պոչս պոկէին. ձեզ համար վերցրած բաժինն առաջները ձդելով և մի քանի վայրկեան ժամանակ գողանալով, հազիւ կարողացայ նրանց սուր-սուր ատամներից ազատւել:

Գայլն ու արջը ոչինչ չկարողացան պատասխանել. գոհ մնացին դէթ նրանով, որ իրանց ընկերը բացի այն, որ մատածել է իրանց

մասին, այլ և ազատուել է այնպիսի գաղաննե-
րից, որպիսիք շներն են:

—Էհ, լաւ, միայն աստ թէ երեխայի ա-
նունն ինչ դրիր, հարցրեց գայլը:

—Բերան-բացէր, պատասխանեց աղուէսը խորամանկ ժպիտով:

Ընկերները ոչինչ չըհասկացան:

—Նստելու ժամանակ չէ, ընկնք, տեսնենք թէ Աստուած ինչ է տալիս մեզ այսօր ուտե-
լու,—ասաց արջը:

—Գնանք, ասաց աղուէսը ու տրտինդ տա-
լով առաջ ընկաւ:

III

Ձմեռը մօտենում էր: Ուտելիք արդէն դըժ-
ւար էր ճարւում: Մի քանի անգամ արջն ա-
ռաջարկել էր կարասը բանալ և իրանց քաղցը յագեցնել, բայց աղուէսը միշտ սկզում էր, որ դրանից աւելի ծանր օրեր կան, պէտք է պա-
շարը պահել, իսկ առ այժմ բաւականանալ Աստուծոյ տւածով:

Արջն ամաչելով իր փոքր եղբօր խօսքերից, միշտ համաձայնւում էր պաշարը թողնել աւելի սև օրւայ համար:

Մի օր, երբ կրկին երեքը միասին մտածում էին իրանց արշաւանքի մասին, աղուէսը դար-
ձեալ «Ը» տրեց:

—Ի՞նչ է, ձայն ուղեցին գայլն ու արջը, էլի ինչ կայ, ոմվ է կանչում:

—Հիմա էլ քաւոր Մրտօն է հրաւիրում՝ ներկայ լինելու իր նորածնունդ երեխայի մկրտութեան հանդիսին:

—Գնա, բայց այս անգամ դժնէ մեզ մի կերպ բաժին հասցրու, վրաբերեցին գայլն ու արջը:

Աղէսը գնաց: Այս անգամ աւելի քաղցած էր, նա մինչև կարասի կէսը դատարկեց և կրկին բերանը փակելով վերադարձաւ ընկերներիի մօտ և խիստ գանգատուեց:

—Դարձեալ այդ անպիտան շները, ահա, թէ ինչողանամ դրանցից իմ վրէժս լուծել. բուրդս գզեցին, բուրդս:—Իմ բախտս էր, որ այս անգամ ձեզ համար աւելի մեծ բաժին էի վեր առել, ապա թէ ոչ նրա փոխարէն ես ինքս կեր կըդառնայի կատաղի շներին:

—Երեխայի անունն ինչ դրիք, հարցրեց արջը:

—Կիսատուկ—Մուրադ, վրաբերեց աղէսը:

Ընկերները կրկին ոչինչ չըհասկացան:

—Է՜հ, բեզանից ոչինչ չի դուրս գալ, բարկացած ընդհատեց աղէսին գայլը. գնանք, արջ եղբայր, գնանք, գուցէ մի բան գտնենք ուտելու:

—Ոչ, այժմ անկարող եմ. որպէս դուրս

գալ, տրանջաց արջը, սաստիկ քաղցած եմ, գնանք քիչ մեր ձմեռւայ պաշարից ուտենք, մի փոքը ոյժ ստանանք և այնպէս դուրս գանք որսի...

—Ւ՞նչ թուլամորթն ես եղել, կտրեց նրա խօսքը աղուէսը, մի քանի ժամ էլ չես կարողանում քաղցին դիմանալ: Եկէք, ես ինքս որս կըգտնեմ: պէտք է քիչ համբերութիւն ունենալ և աշխատել որսով բաւականանալ. եթէ այժմեանից սկսենք դաւուրման ուտել, էլ ւ՞նչ կըմնայ մեզ բուբերին, երբ տանից դուրս գալ անգամ անկարող կըլինինք:

—Լաւ է առում՝ աղուէս եղբայրը, գնանք, արջ եղբայր, կտրեց աղուէսի խօսքը գայլը. չէ՞ որ այժմ՝ ձմեռւայ պաշարն ուտելով, աւելի ցուրտ օրերին քաղցից կըմեռնենք:

—Ի հարկէ, ուրախացած վրաբերեց աղուէսն ու ծուլծուլ լինելով առաջ ընկաւ: Արջը ստիպւած էր համաձայնել իր ընկերների հետ կարտասը ուշ բաց անելու մասին, ուստի և ասաց. «Գնում՝ էք գնացէք, ես անկարող եմ գալ»: Այս ասելով նա թաթը դրեց իր բերանը և մրթմրթալով սկսեց նիրհել:

Գայլն ու աղուէսը մի քանի օր ևս դուրս գալով որսի, կարողանում էին մի կերպ քարշ տալ իրանց կեանքը, որից, ի հարկէ, բաժին հանելով և արջին:

IV

Արդէն դուրսը ցուրտ էր. պետինը ծածկուած էր բաւական հաստ ձիւնով. ոչ մի կենդանի արարած միրտ չէր անիլ դուրս գալ այդպիսի ցրտերին: Որս ձեռք բերելը դժուար էր: Արջը մի քանի անգամ ևս առաջարկել էր կառքը բանալ. սակայն երկու ձայնի դէմ դժգործ դնել ընկերական դատաիարին դէմ գնալով, սպասում էր նրանցից մէկի համաձայնութիւնն ևս ստանալու:

Նոյն օրը մինչդեռ խորհում էին կրկին արշաւանքի դուրս գալու, աղէսը գայլի խօսքերից նկատեց, որ նա տրամադիր է միանալ արջի առաջարկութեան հետ, կրկին «Չ՛ը» արեց:

—Հը, աղէս եղբայր, երևում է, որ քեզ կրկին հրաւիրում են, ասացին գայլն ու արջը:

—Այո, հիմա էլ խնամի Պետօն է կանչում, մանաւանդ լինել իր քրոջ անդրանիկի մկրտութեան ճաշկերոյթին:

—Այդ լաւ է, ասաց գայլը, առանց այն էլ այնպէս խիստ փոխ-որիկ է, որ մեզ համար դուրս գալը դժուար է, գնա, գուցէ մեզ համար էլ քիչ բաժին բերես:

Աղէսը գնաց:

Այս անգամ նա արդէն փառաւորապէս մաքրած զարդարեց զաւուրման, միայն առաջուց մի կտոր

ճարպ թափցնելով պատի ճեղքում, կարասը բերանի վրայ շուռ տուեց և վերադարձաւ ընկերների մօտ, որոնք անհամբեր սպասում էին իրանց եղբօր վերադարձին:

Ներս մտնելով համարեա շնչասպառի նման վայր ընկաւ ընկերների մօտ—«Օ՜ֆ, ոտս—անիծուի սանահէրն էլ, քաւորն էլ, խնամին էլ, միւս անգամ տատս մարդ էլ ուղարկեն յետևիցս, դարձեալ չըպիտի գնամ: Մի փոքր հացի համար այսքան տանջանք քաշել, այսքան հալածանք կրել, այս ինչ կեանք է: Ա՜խ, թէ ձեռքս կ'ընկնի այն անպիտան գամփռը—օ՜ֆ, ոտս», լացի ձայնով վերջացրեց աղէսն իր հեծկլտանքը:

—Ես գիտեմ, որ քեզանից բան չի դուրս գալ, նախատեց նրան գայլը. դատարկ քեզ դովել գիտես, իսկ երբ այժ է հարկաւոր գործ դնել, միշտ կաղի տալով ես տուն ընկնում: Սակայն այդքան չարչարանքից յետոյ հետաքրքիր է գիտենալ, թէ խնամուդ անպրանիկի անունն ինչ դրիր:

—Կեր ու կործ... նւաղած ձայնով պատասխանեց աղէսը:

Այս անգամ էլ ընկերները ոչինչ չըհասկացան:

—Չեմ հասկանում թէ ինչ հարց ու փորձի ժամանակ էք գտել դուք էլ, սովից արդէն շարժուել չեմ կարողանում, ասաց բարկացած արջը, մինչև երբ պէտք է անիծւած կարասը

պահել. ինչ, պերեզմանո՞ւմ պէտք է հարկաւոր գայ մեզ:

—Հա, իսկապէս լաւ յիշեցրիր, վրաբերեց աղէսը, այսօր յոյս չունեմ, թէ ուտելիք ձեռք ձգենք. խիստ փոքրիկ է: Ես էլ առանձնապէս կուշտ չեմ: Հներն այնպիսի խեղդոց չը տուին ինձ, որ կերածս շուտ չըմարսէի: Ես կարծում եմ ժամանակ է կարասը բաց անելու:

—Ես համաձայն եմ, ասաց շտապով գայլը:

—Վերջապէս, մրթմրթալով ասաց արջն ու հազիւ կարողացաւ շարժել իր ծանր մարմինը:

Աղէսն ամենից առաջ ընկաւ:

V

Երեքն էլ ապշած սկսեցին միմեանց նայել, երբ տեսան կարասը դատարկ ու շուռ տւած:

—Այս ինչ: ինչպէս իմացան անպիտան գողերը, թէ այստեղ կարաս կայ թաղւած, ձայն տւեց գայլը յուսահատւած:

—Ի՞նչ գող, ինչ բան. կայ, չը կայ, մեր երեքից մեկի բանն է դա, ապա թէ ոչ սատանան անպատ չէր կարող իմանալ մեր դաղտնիքը, վրաբերեց աղէսը:

—Այո, այո, ճշմարիտ է, դանդաղ կերպով ասաց արջը, ոչ ոք չէր կարող այդ անել, եթէ

ոչ մեղանից մէկն ու մէկը, թէև ես չեմ կարող թոյլ տալ ինձ մտածելու, որ ընկերն այդչափ անազնիւ կարող է լինել։ Սակայն հնար կայ արդեօք իմանալու, թէ ո՛վ է մեղանից գողը, ատամները կրճտացնելով ասաց նա։

—Շատ հեշտ, շտապեց պատասխանել աղուէսը համարձակ վստահութեամբ. ով որ մեզանից կերած լինի դաւուրման, նրա մարմինը ամբողջապէս իւղային կըլինի. եթէ մի լաւ թէժացած կրակի մօտ պառկենք երեքս էլ ու քնենք, անշուշտ մէկն ու մէկիս մէջքից իւղը ծոր-ծոր դուրս կըտայ։

—Այդ լաւ միջոց է, ասաց գայլը, փորձենք, միայն թէ լաւ կըլինի նախօրօք որոշել, թէ ինչպէս պատժենք գողին։

—Ուղղակի սպանել և դաւուրման տեղ նրա միսն ուտել, պատասխանեց աղուէսը։

—Շատ լաւ, ասաց գայլը։

—Համաձայն եմ, վրաբերեց արջը։

Վերադարձան իրանց որջը, մի լաւ կրակ արեցին և պառկեցին շուրջը։ Գայլն ու արջը երկու օր էր ոչինչ չէին կերել. տաքանալն ու քնով անցնելը մէկ եղաւ։ Աղուէսը նկատելով այդ, կամացուկ դուրս եկաւ և բերեց այն ճարպի կտորը, որը թաղցրել էր պատի ճեղքում, և զգուշութեամբ քսեց գայլի մէջքին։

Գայլի մէջքն արդէն փայլում էր իւղի կա-

թիլներով, բայց նա խոր քուն էր մտած. քնած էր և արջը: Աղէսն էլ իր նախկին տեղում ճգւած, պինդ խռմփացնում էր:

Երբ զարթեցին, գայլը առաջինն էր, որ ոչինչ չըկասկածելով, առաջ անցաւ և ասաց.

—Ահա, լաւ դիտեցէք իմ ժէջքը:

Արջը տեսնելով իւղի կաթիլները, բարկութիւնից չըգիտէր ինչ անէր. ժողովեց իր վերջին ոյժերը և երկու թաթով այնպէս խփեց գայլի դլխին, որ նա տեղն ու տեղը մնաց:

VI

Աղէսը մի շաբթով ևս ապահովւած էր մնունդի կողմից: Նա միջոցներ էր որոնում նրանից յետոյ մի կերպ ապրել, մինչև որ օրերը քիչ տաքանային:

Գայլի միսը վերջացաւ: Արջն ու աղէսը նստած խորհում էին, թէ ինչպէս անեն, որ քաղցից չըմեռնեն:

—Ես մի լաւ միջոց դիտեմ, ասաց աղէսը, սրի դու աշուղ դարձիր և միասին գնանք դիւղերը շրջելու, մինչև ձմեռը կանցնի, բայց որովհետև աշուղները կոյր են լինում, լաւ կը լինէր, որ դու էլ աչքեր չունենայիր:

—Եթէ դիտես, որ դրանով կարելի է դլուխ պահել, ես համաձայն եմ աչքերից զրկւել, ինչիս են պէտք նրանք, երբ ես սովից պիտի մեռնեմ:

—Ի հարկէ պլուխ կարելի է պահել: Ես խօսք եմ տալիս քեզ երբէք քաղցած չըթողնել, պատասխանեց աղէսն ու մի բրիչ առնելով հանեց արջի աչքերը. յետոյ նրա պարանոցը մի հատ ջով*) դնելով, միւս ծայրից ինքը բռնեց և արջի յետևից ընկնելով, նրան առաջ արեց ու քշեց որպէս թէ գիւղ պիտի գնան:

—Այսպէս դանդաղ գնալով, արջ եղբայր, մենք շատ ուշ կըհասնենք որև է հարուստ գիւղ. ապի հարթ ու մաքուր տեղերում երկուսս էլ վազենք, իսկ որտեղ քարքարոտ կըլինի, այնտեղ դանդաղ գնանք, որպէս զի քո ոտքերը չըվիրաւորուին: Ուրեմն եթէ ասեմ՝ «կամաց կամաց», նշանակում է քարքարոտ տեղ է և պէտք է դանդաղ գնալ, իսկ եթէ ասեմ «շուտ շուտ», նշանակում է հարթ ու անվտանգ ճանապարհ է և պէտք է վազել, որքան ոյժ կայ, որպէս զի շուտ հասնենք մեր ցանկացած գիւղը:

Արջը համաձայնուեց: Հարթ ու անվտանգ տեղերում աղէսը միշտ վազեցնում էր արջին, իսկ երբ քարքարոտ կամ մացառոտ տեղ էր պատահում, դանդաղ էր քայլեցնում նրան:

Արջը տեսաւ, որ աղէսը շատ ազնիւ կերպով է տանում իր գործը, այլևս չէր կասկածում:

Վերջապէս աղէսը արջին հասցրեց մի ժայռի պլուխ և այնտեղ քիչ հանգիստ տւեց,

*) Խոտից հիւսած պարան:

յետոյ անդունդի ծայրին կանգնեցնելով՝ ասաց. «Արջ եղբայր, շատ հարթ է, որքան դժ ունիս՝ վազիր»:

Իրաւմանկ աղէտը միայն մի բան մոռացաւ, այն է՝ արջի վազեցնելու ժամանակ՝ ջուի ծայրը քաց թողնել: Արջը բոլոր ուժով թռաւ: Աղէտի սիրտը մինչ տրփարիում էր այն յոյսով, որ շուտով պէտք է արջի միսն ուտէ, յանկարծ սկսեց թրպրտալ օդի մէջ, երբ զգաց իրան ապառնացող այն տոկալի մահը, որ պատրաստել էր արջի համար: Երկուսն էլ մի վայրկեանից յետոյ անդունդի խորքումն էին, միայն այն զանազանութեամբ, որ արջը ծանր լինելով մնաց հէնց այն տեղում, ուր ընկաւ, իսկ աղէտը թեթև լինելով՝ դեռ մի քանի սաժէնաչափ թաւալգլոր գալով, քարերին դիպչելով հետուն ձգուեցաւ: Նա իր արժանի պատիժն ստացաւ: Արջի մի կողքն էր միայն ջարդուել, նա դեռ շնչում էր, թէև չէր կարողանում շարժուել և իր վրէժը հանել աղէտի անշնչացած դիակից:

Նոյն միջոցին մի պիւղացի անցնում էր նոյն տեղից. տեսաւ երկուսին էլ. աղէտին վեր առաւ, մորթը մաշկեց, միսը տուց շներին, իսկ արջին որ դեռ ողջ էր, տարաւ առողջացրեց և իր մօտ պահեց:

ՄԱՐ-ՇԻՄՕՆ



ՇՆԻԿԻՆ ԷԼ ԼՈՂԱՅՆԵՆՔ...

Ա Ե Ո Ւ Ղ Ի Ն

Բարի աշուղ, ան քընարդ,
Խփիր յուզած լարերին,
Եւ մեզ Համար դու երգիր
Գոնէ մի երգ սրտագին։

Թող այդ երգը մեզ վառէ
Հայրենիքի սուրբ սիրով,
Նա մեր սիրտը թող լցնէ
Մի անսպառ յոյսերով։

Թող նա անխոնջ մեզ ցոյց տայ
Ճանապարհ փրկութեան,
Թող մեր առջև բաց անէ
Անհետք ուղին գիտութեան։

Գովիր աղնիւ ձգտումները
Եւ ինչ սուրբ է մեզ Համար,
Յոյս ներշնչէ սպասել՝
Մինչ բոպէն փրկարար։

Գովաբանիր քո երգում
Վեհ մրտքերի պաշտպանին.
Հիւսիր պսակ, դափնիները
Մարտնչողի ճակատին։

Եւ նախատինք ու ամօթ
Դու միշտ թափիր վատթարին,
Անէծք կարդայ, անարգէ՝
Ով չի լսէ քո ձայնին։

Բարի աշուղ, ան քընարդ,
Խփէր քաղցր լարերին,
Երգիր, երգիր անընդհատ,
Մենք կարօտ ենք քո երգին։

Պ. ՄՈՋՈՒԵԱՆՑ

ՍՏՐՈՒԿՆԵՐ

X

Երեք մրջիւնները շատ ձուաներ էին ածել, որոնց հարկաւոր էր խնամել։ Եւ գիտէք, թէ որչափ գժուար է ձուանները խնամելը. պէտք է շրջունակ նստել նրա կոդքին, շուռ ու մուռ տալ, լիզել, որ արագանայ նրանց զարգացումը, քաշ տալ նրանց զանազան կողմեր, որ մի գուցէ ցրտից կամ սաստիկ տաքից վնասուեն։ Այդ ձուաներն էլ մէկը չեն, երկուսը չեն, որ խնամողը իմանայ թէ ինչ բանի վրայ է, այլ...մի քանի հազար։ Աստուած բարեբաղդութիւն տայ։ Խնամելու ծանր հոգսը յանձնուած էր սեւերին։ Սեւերը այնքան լիզել էին ձուաները, որ նրանց թաղանթը պլոկուել էր և կարմրել։ Նրանք այլ ևս ոյժ չունէին ոչ մի խնամք տանելու ձուաների վրայ, բայց չէին էլ կարողանում ոչ մի կերպ ետ մնալու իրանց տաժանակիր գործից։

Երբ ձուանները տրաքտրաքեցին և նրանց միջից գուրս սողացին որդնանման ձագուկները, մի քանի ջահել և անփորձ սեւեր ուրախ-ուրախ բացականչեցին.

—Փա՛ռք Աստծու, ազատուեցանք ծանր հոգսից...

Այդ րոպէին մի շէկ մրջիւն մօտեցաւ սրանց և թեթեւաձ դէմքով ասաց.

—Դէ, սրանից յետոյ էլ իրաւունք չունէք ոչ մի րոպէ հեռանալու ձագուկներից. աչքներիդ մէկը չորս պիտի շինէք, նայէք, խնամէք, շուտ-շուտ մաքրէք և կերակրէք նրանց...Եթէ նրանցից մէկը վնասւի կամ հիւանդանայ, իմա-

ցեք, որ բոլորը սևերիդ մի բոպեում կըջնջենք աշխարհի երեսից...

Սևերը խոնարհութեամբ մօտեցան ձագուկներին, նրանց մաքրեցին և սկսեցին մեկ-մեկ կերակրել։ Այնքան ձագուկներին կերակրելն էլ հեշտ բան չէր։ Սևերը իրանց դնչով առնում էին սնունդը և հերթով մօտենում նորածիննների դնչին և ածում նրանց բերանի մէջ։

Մի առ ժամանակ երբ ձագուկները բոժոժներ չինեցին և իրանք թագնուեցին նրանց մէջ, սևերի հոգսերը մի փոքր թեթևացան, որովհետև էլ ոչ կերակրելու գործ կար, ոչ էլ ձագուկներին մաքրելու։ Սևերի պարտականութիւնը միայն այն էր, որ բոժոժները չ'ենթարկուեն ցրտին։ Երբ որ եղանակը ցրտում էր, նրանք պարտաւոր էին բոժոժները մեկ-մեկ կրել մրջնանոցի այն կողմերը, ուր ջերմութիւնը աւելի բարձր էր։ Այդ աշխատանքն էլ շատ հազիւ էր պատահում, որովհետև օրերը ըստ մեծի մասին տաք էին լինում։ Սևերը, որ գիշեր ցերեկ նեղւում էին, այժմ մի փոքր հանգիստ էին վայելում։ Այժմ սրանք հաւաքւում էին խումբ-խումբ նստում մրջնանոցի խուլ անկիւններում, ողբում իրանց ներկայ վիճակը, երանի տալիս փառաւոր անցեալին, թափում միմեանց առաջ իրանց վշաերը և մեկ-մեկու սիրտ տալիս։

Մի օր էլ, երբ սևերը հաւաքւել էին միասին, երևաց մի գնդապետ և խրոխտ ձայնով ասաց.

—Ի՞նչ էք պարապ-սարապ այդտեղ վեր ընկել ու միմեանց ականջին փսփսում...դուք գործ չունէ՞ք...

—Աղա, հանգստանում ենք, պատասխանեց վախվխելով մի սև մրջիւն։

Արիւնը խփեց գնդապետի գլուխը.

—Հանգստանո՞ւմ էք...շատ բէհեայբ նամաղո՞ւլ էք անում...գլուխներդ քարին էք տալիս...Ի՞նչ էք շինել, որ հանգստանում էք...դէ, կորէ՛ք այստեղից, կորէ՛ք, շո՛ւտ...

—Աղա, ո՞ւր...

—Ջհանդամի տակը...տո՛, փուչ կենդանիք, չէ՞ք իմանում, որ մրջիւնները դուրս գալու ժամանակն է, պէտք է

բոժոժները ծակծկէք ազատէք այն խեղճերին, որ լոյս աշխարհք տեսնեն...

—ԸՀ, լեզուդ պապանձէ՛, ասաց ինքն իրան մի սև մրջիւն: Սև մրջիւնները իսկոյն ընկան գնդապետի առաջը և գնացին բոժոժների մօտ, որոնց միջից արդէն քրթքրթոց էր լսւում:

—Շո՛ւտ, ծակծկեցէք բոժոժները, դարձեալ գոռաց գնդապետը,—լացէք նրանց, մաքրեցէք, կերակրեցէք. իսկ յետոյ դատարկ բոժոժները կրեցէք դուրս և շալրտեցէք մրջնանոցից հեռու...

Պէտք է ի նկատի ունենալ, որ ձւաններից դուրս եկածները դեռ կատարեալ մրջիւններ չէին, այլ եթէ ընթերցողը յիշում է, որդնանման ձագուկներ: Իսկական մրջիւնները այժմ էին դուրս գալիս բոժոժներից:

XI

Անցել էր մի քանի օր, մի քանի օր դառնագին:

Մի սև մրջիւն, վախվխելով նայեց այս ու այն կողմ, մօտեցաւ բնի առաջ կանգնած մի քանի ազգայինների և ինչ որ մի բան փսփսաց նրանց ականջում: Այդ սևը զանազանում էր իւրայիններից նրանով, որ մարմինը սովորականից աւելի փոքր էր, քան միւս մրջիւններինը: Նա իր հասակակիցների մօտ կարծես ձագուկ լինէր: Նա յայտնի էր ամենքին իր վերին աստիճանի խորամանկութեամբ: Նրան ամենքը, չըգիտեմ ինչ պատճառով, «Եարամազ» էին կանչում: Եարամազը, փսփսալով սևերի ականջին, իսկոյն հեռացաւ բնից և դիմեց անտառի դէպի այն կողմը, ուր մի վիթխարի սօսի էր բարձրացել և սաղարթալից ճիւղերը հովանիի պէս տարածել կանաչ մարգագետնի վրայ: Մի քանի րոպէից յետոյ բնից դուրս եկաւ սևերի մի խմբակ, որի առաջնորդը տեսնելով դրսի կանդնած սևերին, աչքով արեց նրանցից մէկին: Այս վերջինը մօտենալով խմբապետին, ցածր ձայնով ասաց..

—Դէպի սօսիի կողմը...

Սևերը խոյն ցրեցան այս ու այն կողմ և սկսեցին զանազան ճանապարհներով դիմել դեպի Եարամազի գնացած տեղը։ Այստեղ սևերը, բարձրանալով սօսիի վրայ, լուռ ու մունջ շարուեցին ծառի ճիւղին։

—Տղերք, ասաց Եարամազը, սրանից յարմար տեղ չենք կարող մենք գտնել խորհրդածելու համար։ Առհասարակ ոչ ոք այս կողմերը չէ գալիս և մենք կարող ենք միշտ այստեղ ապահով լինել...

—Ա՜սս...ընդհատեց մի մրջիւն, այս ու այն կողմ խլշկոտելով,—կարծեմ խոտերը խշխշացին...

Մրջիւնները սարսափած կծկուեցան ծառից և ցած նայեցին։ Բանից դուրս եկաւ, որ այդ ամառային անուշաբոյր զեփիւռն էր շոյում մետաքսե խոտերը և ուրախ-ուրախ համբուրւում նրանց հետ։ Մրջիւնները սրտապնդուեցան։

—Դէ, սուս կացէք, վախկոտ սարուկներ, ձայն տուեց խմբապետը նախատելով,—չէք ամաչում, որ խոտերի խշխշոցից էլ վախենում էք։ Թէկուզ հէնց իսկապէս շէկերը լինէին, մեզ ինչ պիտի անեն նրանք... ինչ էք այդքան դողդողում նրանց առաջին։ Հէնց միշտ այնպէս էք անում, որ քանի գնում է, այնքան աւելի են նստում նրանք մեր գլխին։ Դուք ինչ մրջիւններ էք սրանից յետոյ, երբ մեզ տանջում ճնշում են, աշխատել տալիս իրանց համար, խլում մեր ձեռքից մեր արդիւնքը, մեր ճակատի քրտինքի պտուղը և հայհոյանքի կարկուտը թափում մեր ազգի գլխին...Դանի՛ համբերենք... Մի՛թէ դուք բնաւ ինքնաճանաչութիւն չունէք... նայեցէք պահ մի մեր անցեալին, տեսէք թէ ինչ էինք մենք առաջ, իսկ այժմ ինչ դարձանք...

Այդ րոպէին առաջ անցաւ մի մրջիւն և խրոխտ ու ազդու երգ երգեց։

Երգողը մի ջահել մրջիւն էր։ Նոր էր սկսել այսպիսի երգեր յօրինել և, երբեմն խուլ անկիւններում, երբ մենակ էին լինում սևերը, զանազան երգերով ողբում էր իր ցեղի թշուառ վիճակը և լացացնում իւրայիններին։ Սրա վերջին խօսքերը. «Արփին պայծառ չինչ եթերից դարձեալ չողայ, փայլի թշուառ սևիս համար»—մի քանի րոպէ շարու-

նակ դեռ հնչում էին սևերի ականջներում. երևի, բոլորի ցանկացածը, բոլորի սրտի փափագը, հէնց այդ էր։

Բացի այդ երգչից մի քանի ուրիշ մրջիւններ էլ ճառերը խօսեցին, որոնց մէջ նկարագրւում էր սևերի դառն կեանքը։ Այդտեղ զանազան տեսակ վիճաբանութիւններ եղան, մի քանի հարցեր մշակւեցան, թէ ինչպէս գործեն, ինչ ճանապարհներով հասնեն իրանց սուրը նպատակին։ Եւ որովհետև օրը մթնում էր, սևերը վճռեցին առ այժմ վերադառնալ տուն և մի ուրիշ անգամ կրկին հաւաքւել սօսիի մօտ՝ շարունակելու իրանց խորհրդակցութիւնները,

ՅԱՐ. ԹՈՒՄԱՆԵԱՆՑ

(Կըշարունակւի)

III ՄՐՑԱՆԱԿ

Պատմեցէք քովանդակութիւնը

«ԻՍՏԱՅԻՆ ԵՒ ՋԵՐՄԱՆՈՑԻ ԾԱՂԻԿ»

(Մանկավարժական վէպ ԲԻՋԷՐ-ՍՏՈՈՒ)

III

Դուք չէք կարող հասկանալ, թէ ինչպէս նպաստաւոր էին Լաստենաւն դէպուհինների պարգևները, եթէ չէք ծանօթ մի ուրիշ աղջկայ հետ, որ չունէր այդպիսի բարի ծանօթներ։

Էմիլիա Պրատդէն ծնուեց շատ մեծ շքեղ տան մէջ, որ ունէր մարմարեայ պատշգամբ։ Մինչև նրա աշխարհ գալը՝ ամեն ինչ պատրաստել էին, որպէս զի հանդիսաւոր ընդունեն. բոլոր պահարանները լցրել էին ամեն տեսակ բաներով. երեսսրբիչներով, զոտիներով, վարդագոյն կամ կապոյտ հոպալափներով, դլխարկներով, գուլպաներով և կօշիկներով։ Մօրաքրոջ, եղբօր և քրոջ խորհրդով ամեն բան պատրաստել էին։

Մէկ բան միայն չունէր Էմիլիա Պրատդէն, որ բարի դէպուհիներից ոչ մէկը չըպարգևեց նրան ունենալ դոհունակ հալածք ամեն բանի վրայ, և փոխանակ ունենալու քմահաճ, կամակոր, անբաւական բնաւորութիւն, նա նոյնպէս կարող էր լինել բախտաւոր, ինչպէս Լաստենին։

Վերջապէս Լաստենու եօթը տարին լրացաւ. Նա բոլորովին գաղափար չունէր թէ՝ ինչ է նշանակում հիւր և ինչ է ընծան։ Լաստենու մայրը շատ է աշխատում, նա միւս մայրերից քիչ չէ սիրում իր աղջկան. բայց չունի ոչ ժամանակ և ոչ միջոց նրա համար մի որ և է ընծայ պատրաստե-

լու։ Բացի սրանից, այդ առանձնացած տեղում, ոչ ոք չէր տօնում Ծննդեան օրը։ Իր բոլոր կեանքի ընթացքում նա երբէք ընծայ չէր ստացել։ Այդպէս՝ հէնց այդ օրը՝ ինչպէս միշտ՝ Լաստենին նստած իր բարձր բազկաթոռի վրայ, սովորում է կարել. կարկատում է գոյնզգոյն չիթի կտորները, որը գուցէ անկողնու համար ծածկոց դառնայ։ Մայրը նրա մօտ կանգնած խմոր էր հունցում. սեղանի վրայ, երեխայի մօտ դրած է լաստենու ճիւղը գարնանային բողբոջներով, որը կտրել է հայրը, գործի գնալուց առաջ։ Լաստենին գործում է ասեղով, երբեմն կանգ է առնում. սկսում է խօսել ճիւղի հետ, յետոյ դառնում է դէպի մօրը, համբուրելու համար, և մայրն էր ալիւրոտ-ալիւրոտ մօտենում էր նրան, յետոյ դարձեալ Լաստենին աշխատում էր ասեղով, մինչև որ կարում էր վերջի կտորը։ Վերջապէս բոլոր կտորները կարելուց յետոյ Լաստենին հարցնում է մօրը.

—Հիմա կարելի է զբօսնելու գնալ։

Եւ մայրը պատասխանում է նրան՝

—Սպասիր, մինչև կըվերջացնեմ խմորը։

Եւ նորից սկսում է իր գործը։ Յետոյ լւանալով ձեռքերը, ցած է իջեցնում Լաստենուն բազկաթոռից։ Լաստենին մօտենում է իր պահարանին, որտեղ պահում էր իր գանձերը։ Ի՞նչ բաներ էին սրանք. կաթնամանի կտոր, թէյամանի կոթ և ուրիշ շատ ամանների կտորներ և մէկ զանգակ, որն ընծայել էր պապը։ Նա ունի նոյնպէս և տիկնիկ, շորի կտորներից կարած. Լաստենին ամեն օր լւանում է նրան, մաքրում, հագցնում, պարկացնում է, սովորեցնում է կարել, մի խօսքով աշխատում էր պահել և դաստիարակել այնպէս, ինչպէս իրան էին պահում և դաստիարակում։ Լաստենու գանձերի հետ պէտք է յիշել կարմիր և դեղին ներկի կտորները, որոնք նրա աչքին անգնահատելի էին, նոյնպէս մի քանի փայտի կտորները, որ ինքն էր հաւաքել Հիւսնի գործելու ժամանակ, երբ նա մօր հետ գնացել էր գիւղ։

Բոլոր այս գանձերն անգնահատելի էին Լաստենու համար, որը արագ գործում էր ասեղով, մտածելով որ շուտով կըվերջացնի և կըզարճանայ տեսնելով իր բոլոր հազա-

գիւտ իրեղէնները պատրաստ։ Նրա հետ, խաղալու ժամանակ, լինում է հին շուշը դաժան դէմքով, որին անւանում էին Ընկեր։ Լաստենին երբ վերջացնում էր իր գործը, Ընկերը մօտենում է նրան լուրջ, բայց միևնոյն ժամանակ փաղաքշական դէմքով և սկսում է պոչը շարժել, կարծես կամենում է ասել. ժամանակ է խաղալու։

Լաստենին իր բոլոր խաղալիկները դնում է բծերով (լաքա) ծածկւած գոգնոցի մէջ և նստում է մեծ կնձի տուերի տակ։ Ձենապակեայ կտորներից շինում է քառանկիւնիներ ապա շինում է տուն։ Ընկերը մօր դերն է խաղում, դրա համար էլ հագնում է Լաստենու նրբաթել շորը։ Շորերից կարած տիկնին, երևակայում է աղջիկը, Ընկերը պէտք է օրօրէր։ Իսկ ինքը Լաստենին լծում էր երևակայած եզներին։

Բայց շուտով Ընկերը ձանձրանում է իր դերը խաղալուց, վազում է Լաստենու մօտ։ Լաստենին յորդորում է նրան և նա դարձեալ իր գործն է սկսում։ Բայց երբեմն Ընկերը չի լսում Լաստենու ասածները. այն ժամանակ նա ուրիշ միջոց է ձեռք առնում, որ կարողանայ հաշտւել նրա հետ։ Երկուսն էլ մի քանի անգամ, վազում են դէպի փոքրիկ առուն, նայում են ինչպէս են խաղում ձկները, որոնք բոլորովին չեն վախենում նրանցից։

Անցում են ժամերը, նրանց հետն էլ աճում էր Լաստենու բախտը։ Արևը պարզ փայլում է կապոյտ երկնքի վրայ, ոչ մէկ ամպ չի երևում. նրա հետ են Հաւատարիմ Ընկերն և բոլոր դանձերը։

Երեկոյեան անկողնում պարկելով՝ Լաստենին աղօթում է Աստծուն, որ օրհնի իր հօրը, մօրը, եղբայրներին... պահի Ընկերին, տիկնիկներին և ուրիշ բոլոր փոքր երեխաներին։ Աղօթքի առաջին կէսը մայրն էր ասել, իսկ երկրորդ տունը ասել էր բարեսիրտ Լաստենին և չի կասկածում, որ Աստւած կըլսի իր աղօթքը։

Դառնանք հիմա դէպի Էմիլիա Պրատւդին և տեսնենք, ինչպէս է անցկացնում նա Ծննդեան օրը, որի ուրախ տարին լրացաւ։

Վաղ առաւօտեան լսւում է զանգակի ձայնը, բե-

րում են Էմիլիայի համար շատ ընծաները, այն բաները մէջ կայ լաւ արտասահմանի տիկնիկ, որի հետն է և օժիտը, մէկ մեծ պահարան, զանազան շրջազգեստները, գոգնոցներով, անդրավարտիկներով, գուլպաներով, օձիքներով և գեղեցիկ շորերով. այդտեղ կան գլխարկ, հովանոց և ուրիշ շատ բաներ, որ ես մինչև անգամ չեմ կարող հաշուել: Այդ բոլորը միայն տիկնիկի համար էին: Իսկ Էմիլիային ընծայում էին ապարանջան, բրոշ և ուրիշ թանգագին բաներ:

Բայց դարձեալ նա բախտաւոր չէր, ընդհակառակն անբախտութիւնը հետևում էր նրան: Վարդագոյն մետաքսեայ զգեստը, որ նա այդ օրը կամենում էր հագնել, նրա սրտով չէր:

Մայրը և երկու դայեակը աշխատում են զարճացնել նրան խաղալիկներով: Իսկ նա կամենում է այն, ինչ որ չի կարող ունենալ: Այդ քմահաճութեան շնորհիւ այս տունը, օրւայ մեծ մասը լինում էր վրդովւած: Գիշերները մէկը մեւսի յետևից՝ գնում են դերձակուհի մօտ և միայն երեկոյեան հանգստանում է նա և նրա շրջապատողները, երբ զգեստը բերում են:

Բանը նրանումն է, որ Էմիլիայի ծնողները և ընկերները երես էին տւել նրան ծննդեան օրից: Հազիւ թէ նա յայտնում էր իր ցանկութիւնը, իսկոյն կատարում էր: Շքեղութիւնը, հարստութիւնը և բոլոր զարճութիւնները շրջապատել էին այդ կամակոր և քմահաճ աղջկան, որը երբէք չըգիտէր մէկ բուռն փայտի կտորներից զարճութիւն ստանալ: Բայց Էմիլիան իր ընկերների թւում չունէր բարի ոգիներ և նրանցից ոչ մէկը չէր սովորեցրել քչով բաւականանալ:

Ծննդեան օրը մանկական պարահանդէսով է վերջանում: Լաւ երաժիշտներ և լաւ ընթրիք: Մուրադը (Жужайка) տան առաջ լուսաւորւած է գոյնզգոյն լապտերներով: Բայց Էմիլիային նոր դժբախտութիւն պատահեց, դերձակուհին այնպէս չէր կարել զգեստը, ինչպէս ինքն էր ցանկանում: Իսկ գօտին մոռացել էր մախմուրով կարել: Այդ հարւածը Էմիլիային բոլորովին շփոթեց:

—Այս կեանքը նրան դուր չէ գալիս.—ասաց նրա գողտրիկ մայրը։

Գիշերը Էմիլիան վրդովւած, արտասուքով պարկեց քընելու։ Ի՞նչու համար. այդ նա ձեզ չէր կարող բացատրել։ Արդեօք դուք չէք կարող գտնել նրա արտասուքի պատճառը։

IV.

Էմիլիա Պրաուդին միշտ շրջապատւած լինելով սպասաւորներով և շքեղութիւնով, չգիտէր իր բախտը, օգտակար լինել ուրիշներին և զարճացնել իր շրջապատողներին։ Ուրիշ է Լաստենին, նա այդպէս չէ։ Հազիւ թէ սկսել էր մանգալ, սեղանի մօտ է, նախաճաշիկից յետոյ լւանում է թասերը և դրգալները։ Բայց նա ջինջպէս հպարտանում էր դրանցով։ Երբ ոտի ծայրերի վրայ կանգնելով՝ դրգալները դնում էր տեղը, և սրբում էր սեղանը, այն ժամանակ նա կարծում էր, թէ շուտով իր մօր փոխարէն կըպարապի տան գործերով։

Լաստենու տասը տարին լրացաւ. մայրն այդ ժամանակ իր ձեռքը վիրաւորել էր և կապած պէտք է պահէր։ Զուռնէը մօտիկ Հարևան, որ մինչև նրա առողջանալը՝ փոխարինէր, նա պէտք է հայ թխէը ընտանիքի համար։ Բայց ո՛վ կըհունցէը խմորը։

Հէնց այն րոպէին, երբ նա մտածում էր այդ մասին, խոհանոց մտաւ նրա ամուսինը։

—Ջոն,—ասաց կինը.—իմ կարծիքով պէտք է գնաք Իւդիւ մօրաքրոջ յետևից, նա մեզ մօտ կըմնայ մինչև ձեռքըս կառողջանայ։

—Այդ սոսկալի անախորժ բան էք ասում.—պատասխանեց Ջոնը.—խոտը համարեա թէ չորացել է, պէտք է տանեմ ամբարանոց, որ անձրևից չըթրջւի։ Ես ձիերս չեմ կարող տալ։

—Ես կը հունցեմ խմորը—ասաց Լաստենին,—ես շատ եմ տեսել ինչպէս էիր դու հունցում։ Այս րոպէին կըհունցեմ։

—Կեցցէ Լաստենին,—աղաղակեցին միաձայն եղբայրները,— այ լաւ աղջիկ, թողէք խմորը հունցի, նա կարող է։

—Այո՛, այո՛,—նկատեց Հայրը,—ես աւելի կընախադասեմ մանուկ Լաստենուն տասներկու մօրաքոյրից։

Լաստենին չէր կասկածում մօր համաձայնութեան մասին. վերցրեց նրա գոգնոցներից մէկը և հագաւ, որը շատ երկար էր նրա համար։

Սեղանի առաջ կանգնելով փոքրիկ տերուհին՝ ալիւրը թափեց սեղանի վրան։

—Հիմա մի բուռն աղ գցիր,—ասաց մայրը։

—Իսկ յետո՞յ։

—Իւղից կաթիլ և գցիր ալիւրի մէջ։

Կատարելով այդ ամենը, Լաստենին աւելացրեց թթխս խմոր (խաշ) և սկսեց հունցել, իսկ մայրը աւելացնում էր ջուր և կաթ։

—Դու այնքան ոյժ չունես, որ կարողանաս լաւ հունցել, ասաց Մարթան։

—Օ՜հ, ես արդէն մեծ աղջիկ եմ և շատ ուժեղ։ Մի վախէք, ես լաւ կըհունցեմ։

—Լաւ, տեսնե՞նք,—պատասխանեց մայրը։

Մարթան շարունակում էր ածել ջուրը, իսկ Լաստենու արագաշարժ ձեռքերը հունցում էին խմորը, որը շուտով սպիտակեց և հարթացաւ։

—Ի՞նչպէս սիրում եմ այս զբաղմունքը,—ասաց Լաստենին,—երբէք ես այսպիսի զւարճութիւն չեմ զգացել։ Նայեցէք, ինչպէս խմորը կակուղ է և նուրբ։ Մայրիկ, միշտ ինձ կըյանձնէք խմորը հունցել։

—Տեսնենք.—պատասխանեց մայրը,—հաւաքիր բոլոր խմորը մի տեղ։ Հիմա ծածկիր։

Ծածկեց խմորը մի ծածկոցով, որը միշտ գործ էին ածում դրա համար. մաքրելով սեղանի երեսը, Լաստենին լւացաւ ձեռքերը և գնաց մօր մօտ ասելով.

—Հիմա կաթնան կրակին դնեմ։

—Այո, դիր։ Յետոյ գնա մառան և բեր մի կոտր կովի և մի կոտր խոզի միս։

Մի քանի րոպէից յետոյ արագաշարժ աղջիկը յետ դար-

ձաւ, մաքրեց դետնախնձորը և շողգամը։ Մի քանի րոպէից յետոյ ճաշն արդէն պատրաստ էր։

—Հիմա—ասաց մայրը—կարող ես մի ժամ խաղալ առուակի մօտ։

—Ես կուզէի աշխատել և ոչ խաղալ։

—Գործը քեզ համար խաղ ու պար է—ասաց մայրը—բայց եթէ ամենայն օր բան չինէիր, այն ժամանակ կը փախչէիր գործից։ Լաստենին այդպէս չէր կարծում. բայց այնուամենայնիւ նա գնաց առուակի մօտ, ծաղիկները քաղելու և շան հետ խաղալու։ Բայց մի ևնոյն ժամանակ նա չէր մոռանում խմորը, գալիս էր և նայում։

Խմորը պատրաստւում էր, ինչպէս հարկն էր։

—Շատ լաւ խաղ է.—ասաց նրան մայրը—խմորը լաւ պէտք է պատրաստւի։

Ես չեմ պատմիլ մանրամասնօրէն այդ խմորի մասին, կասեմ միայն այն, որ երբ հացերը հանեցին վառարանից, Լաստենին ուրախութիւնից սկսեց թռչկոտել սեղանի չորս կողմը, որի վրայ դրած էին հացերը, և կանչում էր Ընկերին տեսնելու։ Խելօք կենդանին հոտոտեց, ընդունեց լուրջ նայուածք, մի քանի անգամ իրան լիզեց և նկատելով որ իրանից մի մի ինչ որ բան սպասում են, սկսեց բարձր հաչել։

Երեկոյեան բոլորն էլ գովաբանեցին Լաստենու աշխատասիրութիւնը։

—Հիմա դու, Մարթա, քիչ կըպարապես տնային գործերով.—ասաց հայրը.—քեզ կարող է փոխարինել ջահել տիրուհին։

Այդ երեկոյ Լաստենին իրան զգում էր աւելի բախտաւոր, կարծես ամբողջ օրը երեք գայեակ զուգել էին նրա տիկնիկներին։

Երբ հասաւ քնելու ժամանակը, Լաստենին վսեմ կերպով ասաց մօրը.

—Ես կըխնդրեմ Աստուծուն որ ինձ շնորհէ խոնարհութիւն։

—Ի՞նչու։

—Ես հպարտանում եմ, որ կարող եմ լաւ հաց թխել։

V

Կարելի է ինձ ասեն, թէ տասը տարեկան երեխան չի կարող հայց թխել։ Ես կը պատասխանեմ նրանց, որ այն երեխաները, որոնք մեծանում են լեռնային օդի բարերար ներգործութեան տակ և օրւայ մեծ մասը անց են կացնում բաց օդում և վազուց սովորելով մարզել ոտերը և ձեռքերը, լինում են աւելի ուժեղ ու կայտառ, քան այնպիսի երեխաները, որոնք դաստիարակւում են քաղաքում և ուրիշ խաղ չունին, բացի տիկնիկներին հագցնելուց և հիւր գնալուց։

Լաստենին ուժեղ և փարթամ աղջիկ էր և կարող էր օգնել մօրը, երբ նա չէր կարողանում բան անել իր մէկ ձեռքով։

—Ինչ լաւ է որ ես հիմա մեծ եմ,—ասաց նա մէկ առաւօտ,—ինչ կանէր մայրս առանց ինձ։ Ես կարող եմ խմոր հունցել, հայց թխել, կարող եմ նոյնպէս կարկանդակ և հրուշակ թխել։ Հայրս և եղբայրներս չեն նկատիլ մեր տան մէջ ոչ մի փոփոխութիւն։ Ես չեմ ուզում ձրիակեր լինել։

Առաւօտը շատ խոնաւ և մառախլապատ էր, բայց Լաստենին վեր էր կացել ամենից վաղ, իմանալու մօր ցանկութիւնը թէ պատրաստէ նախաճաշիկ։

—Կրակը վառենք.—ասում էր նա,—և ինքնաեռը գցենք, երբ մայրիկը կըկըզարթնի և կըմտածէ թէ՝ «նախաճաշելու ժամանակն է, զարթեցնենք Լաստենուն»։ Ինչպէս կըզարմանայ նա երբ արթնացած տեսնի ինձ։

Լաստենին կամաց կամաց մտաւ խոհանոց։ Նա զգուշութեամբ վերցրեց սափորը։ Զգայշ բաց անելով դուռը, նա դուրս եկաւ և մի քանի րոպէից հասաւ առւակի մօտ, լըցրեց սափորը ջրով։

«Ահա ինչպէս պիտի լինեն բոլոր աղջկերքը», մտածում էր ծեր Բիդիկն, երբ Լաստենին գնաց տուն։ «Նա մեզ պատիւ է տալիս։ Նրա շարժուածքը այնպէս մաքուր է և լաւ, ինչպէս այս առւակի ջուրը։ Նա չէ մտածում ցնորքների մասին և նրա ջղերն, երբէք չեն խանգարւիլ,

տխրությունն ու ստամոքսը և շատ փորձանքներ չեն չարչարիլ նրան, ինչպես չարչարում են ծոյլ մարդկանց աղջկերանց»:

Կրակը վառած է և ինքնաեռը պատրաստ: Լաստենին սկսեց մաղել եգիպտացորենի ալիւրը խմորեղէնների համար:

—Ես յաճախ եմ տեսել ինչպէս էր շինում մայրս,— ասաց նա—փորձեմ ինքս պատրաստել բաղարջներ:

Լաստենին գնաց, բերեց մէկ պուլիկ մածուն ու տարաւ խոհանոց: Գցեց նրա մէջ մի գդալ սոդ, մանր շաքար և ալիւր, յետոյ սկսեց հունցել մինչև որ անօսր խմոր դարձաւ: Նրա սիրտն ուրախութիւնից բաբախում էր, երբ վառարանը վակեց:

—Ով գիտէ—ասաց Լաստենու հայրը գարթնելով,—մեր աղջիկը մեզանից առաջ է վեր կացել:

—Լաւ երեխայ է,—պատասխանեց Մարթան,—մի քանի անգամ նայելով՝ նա կարկանդակ թխելը կըսովորէ:

—Գամ օգնեմ ձեզ հագնւելու,—լսեցաւ դռան յետեւից նրա ձայնը և նոյն րոպէին դուռը բացւեցաւ ու նա մտաւ ներս:

—Այո, ուզում էի քեզ կանչել,—պատասխանեց մայրը,—կրակը չես վառիլ:

—Ես վաղուց է՝ վառել եմ:

—Դէհ, գնա՛ ջուր բեր և ինքնաեռը գցիր:

—Արդէն կէս ժամ է՝ ինչ ինքնաեռը դրած է և եռ է գալիս շոգէ-մեքենայի պէս: Ես պատրաստել եմ նաև սուրճը և...

—Դու շատ լաւ աղջիկ ես,—պատասխանեց մայրը, որին Լաստենին օգնում էր հագնւելու,—դու արդէն փոքրիկ տան տիրուհի ես դարձել. ես հիմա ցոյց կըտամ քեզ թէ ինչպէս պատրաստես նախաճաշիկ: Կուզես սովորել կարկանդակի համար խմոր շինելը:

Դուք չէք կարող երևակայել՝ ինչպէս ուրախ էր Լաստենին, երբ մօրը կանչեց խոհանոց և ցոյց տւեց բաղարջները, որոնք արդէն կարմրել էին:

Կարելի է զարմանալ, որ նախաճաշիկն անցաւ ուրախ և Լաստենու ուրախութիւնն ամենից սրտանց և մաքուր էր:

Մինչդեռ վայլում է արևը, գառնանք դէպի շքեղ սենեակը, որտեղ ննջում էր Էմիլիան։ Ինչ գտնում էր այդ սենեակում, ցոյց էր տալիս որ ծնողները ցանկանում էին զարճուրթիւն պատճառել իրանց աղջկան։ Պատերի վրայ կախած են լաւ պատկերներ, յատակը ծածկւած է դեղեցիկ գորգով։

Բազմոցները, աթոռները և բազկաթոռները շքեղ էին։ Բազմոցներից մէկի վրայ դրած էր նոր զգեստը՝ ամենավերջին տարազով կարած։

Այդ զգեստն մէկ օր առաջ երեկոյեան բերել էին և դրել այնտեղ որ միշտ երեխայի աչքի առաջ լինէր։ Ուրթը ժամը խփեց... Լատեներն ամաններըը լւանալով, տարաւ խոհանոց, և ապա ամեն բան կարգի գցելով, կողովը ձեռքին գնում էր որոնելու արմատներ և հատւածներ, գարեջուրի համար։ Էմիլիան դեռ շուռ-մուռ է գալիս անկողնում, հազիւ բացում է ծանրացած աչքերը և դանդաղ հեռացնում է ճանճերին, որոնք ինչպէս երևում է, վճռել էին չըթողնել նրան քնելու։

— Օրիորդ, զարթեցէք։ Ձեր մայրը հրամայել է ձեզ արթնացնել և ցոյց տալ նոր զգեստը. ասում էր Բրիկիտան, որն արդէն չորս անգամ եկել էր արթնացնելու Էմիլիային։

— Օ՛հ, վերջապէս պատրաստ է։ Անպիտան Տիւրլուրուշն միշտ ուշացնում է և ինձ կատաղեցնում։ Ահա շատ լաւ է, ծալք է կարել, իսկ ես ուրիշ տեսակ եմ ասել կարի։ Զգեստը փչացրել է, վերցրէք Բրիկիտա, աչքս չըտեսնի։ Զարմանալի է, ինձ երբէք ոչինչ չի յաջողւում և միշտ մի բան խանգարում է։

— Այդ այն պատճառով, որ դուք ամեն բան կրկնասլատիկ ունէք և ոչ մէկ պակասութիւն չէք զգում։ Զըգիտեմ կըսիրէք դուք արդեօք շքեղ հագնւել, եթէ ինքներդ աշխատէիք։ Ահա ես ձեզ ինչ կասեմ, եթէ դուք մի փոքր հանգիստ լինէք, այն ժամանակ դուք ամեն բանից բաւական կըմնաք։

— Ինչպէս ես կարող եմ հանգիստ լինել, երբ ոչինչ չեմ հաւանում։ Մայրս ճիշտ է ասում, որ ես քմասլաշտ եմ։ Ի՞նչ անեմ, չեմ կարող ուրիշ տեսակ լինել։ Ոչ ոք չի կատա-

ըում այնպէս, ինչպէս ինքս եմ կամենում, դրա համար էլ ես դժբախտ եմ։

—Արդեօք լաւ չէը լինիլ աշխատէիք ուրիշների համար, քան թէ ուրիշը ծառայէը ձեզ,—աւելացրեց Բրիկիտան,—ես աշխատում եմ առաւօտից մինչև երեկոյ, շաբաթն վաստակում եմ միայն երկու դոլլար և բոլոր ուոճիկս ուղարկում եմ Իրլանդիա, աղքատ մօրս համար։ Այն միտքը, որ ես պահում եմ մօրս, ինձ վերին աստիճանի ուրախացնում է։ Երևի դուք չէք մտածել աշխատելու ուրիշի համար։

Ո՛չ. Էմիլիան այդ մասին երբէք չէը մտածել։ Առաջին րոպէից երբ նա սկսեց մտածել, ամբողջ տունը աշխատում էր ճշտութեամբ կատարել նրա ցանկութիւնը։ Նրա ծնողները չէին մտածել, որ նա ինքը կարող է նրանց ծառայել, ընդհակառակը, նրանք այսպէս էին ասում, իբր թէ բոլորը նրա ասածը պէտք է կատարւի։ Միայն Բրիկիտայի արարքները հասկացնում էին աղջկան, թէ կայ մի ուրիշ անյայտ հնարք, աւելի բախտաւոր լինելու համար։

ՕՐ. ԵԼԻՍԱԲԷԹ ՆԱԽՍԻՒԵԱՆ

(Կըշարունակուի)

Ա Ր Ձ Ա Ն Ի Պ Ա Տ Ի Ճ

(«Աղբիւրի» 1895 թ. յունուար համարի 28 և 29 երեսներում տպած նկարների բովանդակութիւնը)։

Բասարը նկատելով, որ իրանց խոհանոցում երկու հատ եփած ու մաքուր իստակած հնդկահաւեր կան, մտքումը դրեց գողանալ և ուտել. նա մտածեց ընկերացնել և իր հարևանին—Բրդոտին։

—Բրդոտ, քնչէ կըտաս, որ քեզ մի լաւ հիւրասիրեմ հնդկահաւի մսով,—խորամանկ ժպիտով ասաց Բասարը մօտենալով իր հարևանին։

—Էհ, դու էլ ուզում ես մի փոթորիկ բերել գլխիս,—պատասխանեց Բրդոտը։—Ոչ, ես չեմ ուզում։

—Ոչինչ չըկայ. ես այնպէս կարող եմ գործը կարգադրել, որ ոչ ոք չի իմանայ, թէ ով է գողը։ Չես ուզում, ես մենակ էլ կարող եմ անել, միայն ցանկութիւնս այն էր՝ որ դու էլ մասնակից լինէիր իմ ճոխ նախաճաշիկին։

Բրդոտը թէպէտ և մի քանի անգամ փորձել էր այդպիսի դէպքերում և իր կաշւի վրայ կրել պատժի ծանրութիւնը, բայց գայթակղելով Բասարի խօսքերից, համաձայնեց նրա հետ գողութիւն անել։ Բասարը առաջ անցաւ, որպէս տանու և առաջինը ինքը մտաւ խոհանոց։ Բրդոտը հետևեց նրան։

Երկուսով սրդէն մաքրազարդում էին հնդկահաւերի անոյշ միսը, երբ աղախինը պատահմամբ ներս մտաւ խոհանոց։ Ձեռքն ընկած փայտով մի քանի հարուած հասցրեց գողերին, որոնք ամօթահար եղած, դուրս պրծան խոհանոցից և փախան։

Աղախնի աղմուկի վրայ հասաւ և խոհարարը, և սկսեց ծնկներին խփել, տեսնելով հնդկահաւերը գողացած։

—Ախ, թէ ձեռքս կընկնի Բասարը, ես նրան ցոյց կը տամ, թէ ինչ է նշանակում գողութիւն անել։ Այ, թէ լաւ

ես արել, որ ջարդել ես այն անպիտան Բրդոտի ոտքը— աղախնին դառնալով ասաց խոհարարը,—որը երևի պատճառ է դառնում մեր շնիկի փչանալուն. սակայն ես այնպիսի պատիժ կըտամ նրան, որ յաւիտեան նա չընկերանայ ուրիշին և գողութիւն անի:

Բրդոտը կաղի տալով, տուն էր վախել, իսկ Բասարն ամբողջ օրը թագնուած էր—խոհարարի կատաղած միջոցին նրա ձեռքը չընկնելու համար: Բայց երկար մնալ թագուստի մէջ անկարող էր, ստամոքսը կրկին էրն էր պահանջում, և նա յայտնուեցաւ դարձեալ իրանց բակում: Խոհարարը մի լաւ ծեծելուց յետոյ, թոկով ամուր կապեց և առաջն ածեց գողացած նախաճաշիկի մնացորդները:

—Այսպէս ուրեմն, չըկարողացար գնահատել արդարութիւնը, հիմա կապուած կաց և բաւականացիր միայն ոսկրներով, որպէս զի զգաս քո մեղքի ծանրութիւնը,—ասաց խոհարարը և հեռացաւ:

Բասարը այժմ միայն հասկացաւ իր սխալը և գլուխը ծռած՝ մտածում էր արածների վրայ և հազար անգամ զղջում:

Այդ միջոցին դրսից—վանդակի ճեղքերից գլուխը ներս պարզած Բրդոտը ծաղր էր անում նրան և ասում.

—Բաս ասում էիր, թէ ոչ ոք մեզ չի տեսնիլ. այս այս քեզ խրատ, որ միւս անգամ գողութիւն չանես և ուրիշին էլ չըգայթակղեցնես... Հախդ ա՛...

ՄԱՐ-ՇԻՄՕՆ

հետաքրքրական

ՀՍԿԱՅ-ՄԱՆՈՒԿ

Պետերբուրգում ներկայումս ի ցոյց է հանուած մի հսկայ-մանուկ, կարլ Ուլրիխ անունով, որ իսկապէս հսկայական հասակ ունի։ Այդ մանուկը, որ այժմ 14 տարեկան է, 2 արշ. 14 վերշ. բարձրութիւն ունի, իսկ ծանրութիւնն է 400 գրանքայ։ Հսկայ-մանուկի ձեռքերը և ոտները աճագին են. նրա միջի մասի տրամադիծը հաւասար է արծաթ մանեթի տրամագծին։ Այդ մանուկը պատելով Եւրոպայի զանազան քաղաքները, ի միջի այլոց ներկայացաւ և հռչակաւոր պրոֆ. Վիրխովին, որը վկայեց, որ մանուկի կազմուածքը բոլորովին բնական է և առանց որ և է պակասութիւնների։

ՕԴԻ ԲԱՐԵԽԱՌՆՈՒԹԻՒՆԸ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ

Օթերևոյթաբանական տեղեկութիւնները հաստատապէս ապացուցել են, որ բազմամարդ քաղաքային կենդրոններում իրանց զանազան շինութիւններով և ծխնելոյզներով օդի բարեխառնութիւնը համեմատաբար աւելի բարձր է, քան նրանց արուարձաններում և շրջակայքում։ Բերլինի օդերևոյթաբանական ընկերութեան ժողովում պրոֆ. Հելմանը իր հետազօտութիւններով հաստատում է նոյն փաստը։ Նրա ասելով, Բերլինի օդը մի ամբողջ % աւելի տաք է, քան նրա շրջականներինը, իսկ ամառւայ խաղաղ երեկոներին օդի բարեխառնութեան այդ տարբերութիւնը շատ անգամ հասնում է 5 %։ Նոյնանման երևոյթը նկատել է Պարիզում և մետէօրոլոգ Ժոբերը, որը համեմատել է ս. Յակոբի աշտարակի վրայ շինուած իր դիտանոցում բարեխառնութիւնը Սէն-Մարսի պարկի օդի բարեխառնութեան հետ։ Պարիզի օդը երկու % աւելի տաք է եղել, քան նրա արուարձաններինը։ Միւս կողմից բելգիայի գիտնական Պրինգը ե-

կել է այն եզրակացութեան, որ բոլսերն ամենաուշիզ ցուցիչն են իրանցկրած փոփոխութիւնների, ըստ որում բնի ներքին կեղևի իւրաքանչիւր տարւայ միջին բարեխառնութիւնը մօտաւորապէս հաւասար է արտաքին օդի միջին բարեխառնութեան և ենթակայ են երկուսն էլ միևնոյն փոփոխութեան։ Ա.յսպիսով Մաքս-Նահսուտին, ինչպէս նկատում է «Temps» լրագրում, մետէօրոլոգները հնաւորութիւն ունեն իրանց դիտողութիւնները ստուգելու շնորհիւ այն ինքնագիր գործիքների, որ պիտի ամրացնեն ծառի կեղևին հաղորդակցութիւն ունենալու համար միջուկի հետ։

ԶԻՄՐԱԼԻՔ

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Առաջ. Գէորգ Բ.

10) Կայ մի այր՝ մէջը անդունդ է շատ խոր,
Եւ այդ այրումը—մի վիշապ պառկած,
Երկար տարիներ շարունակ տկլոր,
Ոտները ամուր շղթայով կապած։
Նա իր այդտեսակ գերի դըրութեամբ
Շատին է կծել, շատերին դաղել,
Շատին էլ սպանել, բայց յամառութեամբ
Իրան միշտ ազատ, միշտ քաջ է պահել։

—

Առաջ. Հ. Բար.

11) Զորս վանկանի մի բառ գտէք,
Տասը տառից բաղկացած,
Եթէ նրան տեսնել ուզէք,
—Մսի մօտ շատ է նստած։
Սկզբի վանկը մի մեծ բան է,
Թէև նեղ, բայց շատ երկար է.
Երկրորդ վանկը եթէ կարդաս՝
Մի դերանուն կըստանաս։
Երրորդ և. չորրորդ վանկերը

Եթէ 'ի մի դու ձուլես,
Լիզելով քո հինգ մատները՝
Հաճութեամբ անուշ կ'անես։
Զորրորդ վանկը ջոկ վերցնելով՝
Ուրիշ երկիր գնալիս
Եթէ անցար հովիտներով՝
Անշուշտ տեսած կըլինիս։
Եթէ լուծել ուզենաք՝
Բանջարանոց ալիտ երթաք։

Բացատրութիւն «Աղբիւր» № 2-ի հանելուկների։

ՅԱՐԳՈՅ ԽՄԲԱԳԻՐ

Կարդալով Աղբիւրի երկրորդ համարը, բաւականին հանելուկների հանդիպեցի, և մէկ մէկ կարդացի ու այսպէս բացատրեցի.

№ 3

Հանելուկն է միս,
Որը դոնւում է տանը ամենիս,
Իսկ երբ հակառակ կարդաք,
Իսկոյն սիմ կըստանաք,
Որին երաժշտները,
Պահում են իրանց մօտը։
(Ահա այսպէս կարդացի
Եւ Աղբիւրիդ ուղարկեցի)։

№ 7

Այսօր զբօսնում էի պարտիզում,
Եւ ծաղիկներիս նայում։
Ցանկարծ նայեցի թուփին,
Եւ իսկոյն յիշեցի փութին.
Առաջի. ուրեմն թուփն է պարտիզում,
Եւ փութը կչեռքի միջում։

№ 5

Կլոր է, փոքր է,
Մինչև երկինք հասնում է.
Դա էլ մարդու աչքն է։

№ 9

Քառակուսիների տեղաւորելը եթէ չէմ սխալւում, պէտք է որ այսպէս տեղաւորւի, ամեն կողմից 42 ստացւի։

1	10	11	20
2	9	12	19
3	8	13	18
4	7	14	17
5	6	15	16

ՕՐ. ԵՂԻՍԱԲԷԹ ԲԱԲԱՓԵԻԹԵԱՆՑ

4) Շըւաք. 6) ծառայ. առած. 8) $14^{8}/_{4}$։

Մ Ա Տ Ե Ն Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ւ Ն

ՏԻՐՈՒՀԻ ԿՈՍՏԱՆԵԱՆՑԻ

Փոքրիկ Թարգմանութիւնները, տպագրուած 94 Թ. Տփղխուում։ Լիր արքայ, Գայլ, Թուղթ և Հին դերբերը, Տիքօյացի աղջիկ և Թլատ, Մեր պատիւ գաւազանը, Անհանգիստ դիշերը, Որսի դնդակ, Մայրական սէր, Գէորգ Կրաբը. Մրցումն։

—

Ժամանակին մեր մամուլը թուրցիկ կերպով յայտնեց իր կարծիքը վերոյիշեալ թարգմանութիւններուն առթիւ. թուրցիկ ենք ասում, որովհետև ոչ մի տեղ մանրամասն չըդրուեց դրանց մասին, մինչդեռ այդ ուղղութեամբ դրքերին պէտք է լուրջ վերաբերուել՝ քանի որ դրանք տարածելու են ժողովրդի մէջ և նրան մատուցանելու են մատակարարելու։ Չենք կարող մեղադրել մամուլը, այլ իրաւունք ունենք պահանջելու մեր մանկավարժներին, որ նրանք անհոգութեամբ են վերաբերուում դէպի իրանց կոչումը, մինչդեռ բարեխիղճ մանկավարժի պարտքն է հսկել թէ ինչ է կատարուում այն առաքելութեան, որի դլուխը կանգնելու կոչումն ունի։

Տ. Կ.-ի թարգմանութիւնները կարդալով մենք այն եզրակացութեան եկանք, որ թարգմանչուհին լաւ ուսումնասիրած լինելով մեր ներքին կեանքը, յաջող ընտրութիւն է արել թարգմանութեան համար։ Նրա թարգմանութիւնները կարելի է երկու մասի բաժանել՝ ժողովրդական և Մանկավարժական, բայց բոլորն էլ անխտիր օգտակար և մատչելի են թէ ժողովրդին և թէ մանուկներին։

Մեր խօսքին ապացոյց ծառայում են դրքերի բովանդակութիւնները, որ առաջ ենք բերում։

1. Լիր արքայ.*) Սա հանրածանօթ Շէկսպիրի հեղինակութիւնն է, բայց ոչ նոյն ընդարձակութեամբ և մանրամասնութեամբ, ինչպէս որ դուրս է եկել հեղինակի գրչի տակից, այլ սմփոփ համառօտութիւն է։

Լիրը—իր իսկական դրութեամբ չատ չատերին անմատչելի է, բայց թարգմանչուհու Լիրը — բոլորին կարող է մատչելի լինել։

Լիր արքայի մէջ դուրս բերուած կնոջ իդէալ—յանձին Կորդիլիայի՝ արքայի փոքր աղջկայ. սա մի կատարելութիւն է—աղնիւ, անկեղծ, ճչմարտասէր, համեստ ամչկոտ և փոքր ինչ յամառ,—որ բոլոյս էր իր աղնիւ բնաւորութիւնից։ Նա չափազանց սիրում է իր հօրը, հայրն էլ փոխադարձաբար նրան, և աւելի քան իր միւս երկու մեծ աղջիկներին։ Կորդելիայի

*) Նոյնը լոյս է տեսել և պ. Խ. Մ.-ի ձեռքով, գեղեցիկ թարգմանութեամբ և պատկերազարդ։

մեծ քոյրերը—նրա հակապատկերներն են, նրանց մէջ Կորդելիայի արժանիքները չեն նկատուում. Ընդհանք հօրը իսկապէս չեն սիրում, բայց ցոյց են տալիս որ սիրում են, կեղծում են և ինչո՞ւ, լոկ, չահը աչքի առաջ ունենալով—ստանալով հօրից իրանց բաժինքը,—ահա ինչու էին նրանք կեղծում, և իսկապէս էր, հէնց ստանում են խոստացած հարըստութիւնն ու իրաւունքը, իսկոյն հօրից երես են դարձնում և քոյի դրանից պատճառ են լինում հօր խելագարութեան ու վոնք քրոջ՝ Կորդելիայի մահուան։ Ներժքախտութիւնների գլխաւոր պատճառը հօր փառամոլութիւնն էր. նա խաբւում էր իր մեծ աղջիկների կեղծ խօսքերով, նրանց իրանց դէպի հայրը ունեցած սիրոյ հրապարակական արտայայտութիւնը—նրան հօթներորդ երկինքն է բարձրացնում. և երբ նոյնը չի տեսնում ու լսում հրապարակաւ իր փոքր սիրած աղջկանից—նա կատաղում է, չանթերը է արձակում, անէծք թափում անմեղի գլխին։ Կորդելիան հօրից որպէս ժառանգ ստանում է անէծք, և սակայն, նրա մէջ դէպի հայրը ունեցած սէրը չի մարում, որովհետև նա նա հասկանում է հօր դրութիւնը, նա ցաւ է սիրտ զգում էր հօր թեթևամտութիւնը և դրա համար էլ ներողամիտ գտնուեց ու իր բարութիւնը և սէրը արտայայտեց աւելի զօրեղ կերպով, քան կարող էր նոյնը անել հօր պահանջած ժամանակը, նա իր սէրը արտայայտում է չօշափելի կերպով և ոչ թէ մեծ քոյրերի նման պատիր խօսքերով։

2. «Գայլ». Գլքոյկի հերոսը 14 տարեկան տղայ է։ Տղայի հայրը հիւանդ է, մահուան վտանգ է սպառնում. գիւղական բժիշկը տալիս է դեղատուն, բայց գիւղում դեղատուն չըկայ, իսկ մօտակայ քաղաքից դեղ բերել ոչ ոք չի համարձակւում. դէպքը լինում է ձմեռը, գիշեր ժամանակ։ Տղան տեսնում է վտանգի մեծութիւնը, նա վճռում է ինքը գնալ դեղ բերելու, հայրն ու մայրը չեն թողնում որ գնայ, բայց վերջը համաձայնւում են թողնել։ Ճոլորն էլ վախենում էին սոված գայլերից, որոնք թափառում էին որս փնտրելով։ Հայրը տղային ճանապարհ դնելիս ասում է «վտանգի պատահած ժամանակ» գլուխդ չըկորցնես. այս խօսքերը խոր դրոշմւում են տղայի սրտում։ Դեղը տուն բերելիս, նրան հանդիպում է մի գայլ. «գլուխը չի կորցնում» և կարողանում է փայտով սպանել գայլին, ու աւարով վերադառնում է տուն, որի համար և մեծ պատիւներով է արժանանում։

Եթէ այս գլքոյկը կարդայ մի փոքրիկ տղայ, նրա մէջ բարի նախանձ կըզարթնի դէպի հերոս Սաւելիանը, և անկասկած, դէպք չի բաց թողնիլ—որ ինքն էլ հերոս լինի Սաւելիանի նման։

3. «Թուղթ».—Գրւածքի թարգմանութիւնը կարդալով ընդարձակ ուսումից զուրկ մարդը, չատ բան կիմանայ թղթի մասին. և որ գլխաւորն է՝ այլ ևս նրա համար գաղտնիք չի լինել—թէ ինչ է և ինչից է պատրաստւում թուղթը,

որ ամենայն օր գործադրում է, բայց չըգիտէ թէ ինչպէս է Նրա ձեռքը հասնում թուղթը։ Ժբաղատաբար այս գրւածքը մի պակասութիւն ունի—դա այն է որ թղթի պատրաստութիւնը գործարանում, այնքան էլ պարզ չէ. մինչդեռ մի իրի տեխնիկան պէտք է չատ մանրամասն և պարզ լինի, որ պատկերացնել կարողանայ իւրաքանչիւր գործարանական մեքենաներին անծանօթ մարդ։ Ի հարկէ, դրանում թարգմանչուհուն չի կարելի մեղադրել, նա թարգմանել է, գուցէ և զգացել է հեղինակի պակասութիւնը, իսկ պակասը լրացնել—իրաւունք չի համարել։

4. «Հին գրքեր».—Այս թարգմանութեան արժէքը, իւրաքանչիւր ընթերցող կարող է որոշել—նայելով թէ որքան բան է առանում ընթերցողից։ Դա նոյն իսկ մեր դպրոցների 3-դ մինչև անգամ 4-դ դասարանների սաներին կարող է օգտակար լինել։ Սակայն բացի աշակերտներից նա մի մեծ ծառայութիւն կարող է անել մեր, այսպէս ասած, միջին դասակարգին։ Գուցէ չըկայ մի մարդ, որ տեսած չըլինի գիրք. բայց թէ ինչպէս է առաջ եկել գիրքը, դժւար թէ ուսում և այն էլ բարձր ուսում չըստացած մարդը իմանայ։ Բովանդակութիւնն է գրքոյկի՝ սկզբնական գրքի պատմութիւնը մինչև մեր օրերը, մինչև տպագրութիւնը։ Այդ գրքոյկը կարդալով իւրաքանչիւր մարդ, առանց բարձր ուսման էլ կըծանօթանայ գրքի պատմութեան հետ. և այն՝ ինչ որ մինչև որ դրա ընթերցումը նրա համար հանելուկ է ու մութ—կըպարզւի։

5. «Տիրօլացի Աղչիկ».—գրքոյկիս հերոսուհին է—աղջիկը, սա փոքր ժամանակ հեռանում է իր հայրենիքից և կամաց կամաց մոռանում է հայրենիքը. բաւականին ժամանակ անցնելուց յետոյ երբ պատերազմի ձայներ են տարածւում, և աղջիկը լսելով որ վտանգ է սպառնում իր նախկին սիրելի հայրենիք Բրեգնէյ քաղաքին—նրա մէջ զարթնում են մանկական յիշողութիւնները և դէպի հայրենիք տածած սէրը, խլղճը թելադրում է փրկել հայրենիքը սպառնացող վտանգից և նա արդելքները յաղթելով՝ աւետում է իր հայրենիքին սպառնացող վտանգի լուրը. ի վարձատրութիւն իր պարտականութեան—նա յաւերժանում է։ Ձենք կասկածում, որ իւրաքանչիւր ընթերցող աղջիկը կըփափագէր—դէթ մասամբ լինել—Տիրօլացի աղջիկ։

6. «Ժլատ».—Ժլատ բառը առհասարակ չատ դժգոհութիւն է զարթեցնում մարդու մէջ. իսկ աւելի մեծ ղըւանք է առաջանում, երբ մարդ ժլատների նկարագրութիւն է կարդում. բայց բարեբախտաբար գրքոյկիս ժլատը—օրինակելի ժլատ է (թէև ոչ ամբողջապէս). սրան կարելի է անւանել բարեգործ ժլատ. այս ժլատը—հակատակը է Մոլիերի ժլատին. սա ժլատութիւն է անում իր տնձը ղրկում է՝ որ ուրիշներին բարութիւն անէ. և երբ տեսնում է իր բարիքների պատուղը, հոգեպէս մխիթարւում է։ Մենք չարունակ լսել ու լսում ենք և երկի

դեռ երկար պիտի լսենք՝ որ այսինչ մարդը չատ ժլատն է, այն ինչը ի բնէ չատ ագահ և մլչտ դրանք մեզ վրայ վատ տպաւորութիւն են թողնում. բայց աւելի չատ այդ ածականը դրոշմում են վաճառականների ճակատին, որոնց մեծ մասը ժլատութեամբ է հարստանում, նոյն իսկ առած էլ է պատում՝ „Не пусти душу въ адъ, не будешь богатъ.“ և այդպիսով հարստացողները, իրանց հարստութիւնը գործադրում են համարեա միայն սեպհականին բաւականութիւն տալով։ Սակայն Դէորդ Կրաբբի ժլատը օրինակելի է—եթէ բոլոր ժլատները նրան նմանեւելու ձգտում ցոյց տային, հաւատացէք որաչխարհն չուտով կըկերպարանափոխուէր. մանաւանդ հայերիս վիճակը կլրաւանար, եթէ ժլատ, վաչխառու վաճառականները դոնէ Գէորդ Կրաբբի ժլատի կատարածի մի մասը կատարէին։

7. «Մեր պապի գաւազանը». պատմութիւնը անում է ինքը գաւազանը. դուցէ այս դրջոյկը այնքան էլ մատչելի չըլինի փոքրիկներին։ Շատ գեղեցիկ դուրս է բերւած բնութեան աստիճանական ղարգացումը, և այն՝ որ բնութեան մէջ անպէտք բան չըկայ։

8. «Անհանգիստ դիշեր». Բովանդակութիւնը չատ հետաքրքրական է։ Մի ամրոցում ապրում էր ընտանիք, այդ ամրոցում կար մի սենեակ, որ չատ ժամանակ չէր բացւած. պատճառը՝ սրընոտիպալաչտութիւնն էր. աղախինները և առհասարակ ծառաները վախենում էին գնալ այդ սենեակը. որովհետև այդ սենեակում (իբրեթէ) ուրւականներ են ապրում։ մի օր գաղտնիքը բացւում է և ով է բաց անում—երեխաները։ Բանից դուրս է գալիս, որ բոլորին երկար ժամանակ վախեցնողը եղել են ուրւականների փոխարէն՝ դիշերային բզեզը, որոնք մտել էին այդ սենեակը, և որովհետև մութն էր սենեակում, նրանք իրանց բնակութիւնը հաստատում ու դիշերները ձայներ հանելով վախեցնում էին չարունակ տգէտ ծառաներին։ Եթէ չենք սխալւում—երեխաներին վախեցնելու վատ սովորութիւնը, բոլոր ազգերի մէջն էլ կայ, և իւրանչիւր ազգ իւր սովորութեանց համեմատ զանազան անուններ է տալիս դևերին. այդ սովորութիւնը ամենից չատ տարածւած է ցածրը դասակարգում. խեղճ երեխաների մտքերը պղտորում են զանազան դևերով և ուրւականներով։ Ներկայիս մանկավարժութիւնը այդ ազգ սովորութիւնը աստիճ հարւածում է։ Այս թարգմանութիւնը չափազանց կուրախացնէ այն երեխաներին, որոնց միտքը ծանրաբեռնւած է, անվորձ մայրերի և յիմար դայեակների չնորհիւ—վախով, և այն էլ դէպի չեղած դևերը։ Մայրերին սա մի լաւ օրինակ է. սրանք պէտք է աշխատեն իրանց զաւակներին հեռու պահել այդպիսակ կասկածներից. թող իրանք էլ նմանւեն դրջոյկիս մէջ յիշւած մօրը։

9. «Մայրական սէր».—դրջոյկի անունն արդէն բաւական է, որ մարդ իմանայ թէ ինչի մասին լինելու խօսքը։

Մի այրի ունենում է մի աղջիկ. միջոց չունենալով միասին ապրելու, նա հեռացնում է աղջկանը օտար տեղ, ինքն էլ ծառայութեան մտնում. աղջկայ բացակայութիւնը նրան սաստիկ տանջում է, նրա հոգին հալւում է. վերջապէս բաւական ժամանակից յետոյ նրան յաջողւում է գնալ իր աղջկայ տեսութեան. ձմեռ, դիշեր ցուրտ. սէրը և կարօտը նրան ձըգում են, նա այլ ևս մոքով չի գործում. չի լսում ուրիշների բարի խորհուրդը և քիչ է մնում որ առանց փափագին հասնելու— կեանքից զրկւի։ Այստեղ երևում է մօր անչափ սէրը։ Բնական է, որ մայրը անչափ սիրում է իր միակ զաւակին. և իրաւ ոմն է աբնուցանում և մօտ վեց տարի կըրթում, առանց կողմնակի օգնութեան, իր զաւակին, ի հարկէ, մայրը. ոմն է ցաւ քաշողը, երբ եբեխան հիւանդանում է, ի հարկէ մայրը։ Թէպէտ պատահում է որ մայրն անիծում է իր զաւակներին, բայց դա լինում է նրա դառնացած ժամանակ և բարկութիւնն անցնելուց յետոյ, նա նոյն իսկ զղջում է իր արածի վրայ։ Խորհուրդ ենք տալիս մայրերին կարդալ այս գըքոյկը և աշխատել գըքոյկիս մօր նման անզդոյշ քայլ չանել. սէրը կարելի է արտայայտել առանց վտանգի ենթարկելու, երբ դա չի պահանջւում։

10. «Ոսկի դնդակ». բաւական հետաքրքրութեամբ է կարդացւում այս գըքոյկը։ Մի որսորդ պատմում է իր ընկերին թէ ինչպէս ինքը կարողանում է կատարել որսորդական ամենագլխաւոր պահանջները—չըտաքանալ և չը յուզւել. չատ գեղեցիկ պատմութիւն է, մանաւանդ պատմելու եղանակը, դա չատ կըհետաքրքրէ իւրաքանչիւր որսորդ թէ մարդուն և թէ տղային. և անկասկած տղան կաշխատի օգուտել, եթէ իրա հետ փորձանք պատահած լինի որսի ժամանակ։

11. «Գէորգ Կրաբերի»*).—Այս թարգմանութիւնը ժամանակի համեմատ պէտք է առաջին տեղը դասել։ Գըքոյկիս հերոսը Գէորգ քահանան է, որ քահանայութեան կոչումն է ընդունում հասակն առած ժամանակ, երբ արդէն կեանքի փորձը նրանից սահեցնում է փորձաքար, նա ակնածութեամբ է ընդունում այդ ծանր և պատասխանատու պաշտօնն ու կոչումը։ Ո՛վ ծանօթ չէ մեր «քահանայական հարցին», որ չատերի արիւնը պըղտորում է, մանաւանդ երբ չարունակ մարդ կարդում կամ լսում է որ տգէտ, թերուս և անբարոյական քահանաները փոխանակ պահանջելու, արխիւ ընկնելու—չատանում են և զգալի կերպով, և այն էլ մի այնպիսի ժամանակ, երբ ահագին պարտականութիւն է դըրւած այդ կոչման վրայ։ Բայց ինչպիսի քահանայ է Գէորգ Կրաբերը. միթէ նա նրանցից է, որոնք գրել կարդալ անգամ չըգիտեն, որոնք քահանայութեան վրայ նա-

*) Նոյն գրուածքը լոյս է տեսել «Աղբիւրի» մէջ օր. Վարս. Զաքարեանի յաջող թարգմանութեամբ։

յում են իրըև հարստութեան և ապրուստի աղբիւրի վրայ, որոնք օգտակար և վաստակաւոր են համարում մի քանի տաղմոս կարդալով ու զարհուրելով ասելով՝ մի աբասի դրպանը ձգիլ, քան թէ դնալ դպրոց և իր համազիւղացու նման արիւնքրտինք կոխած, աշխատել. ոչ, Գէորգ Կրաբերը դրանցից չէ,նա կրթւած բարեխիղճ և աղնիւ մարդ է. նա հաւատարիմ ծառան է իր բարձր արժանաւոր կոչման: Խելօք, ուսեալ բարեկիրթ քահանան հրաշքներ անդամ կարող է անել տգէտ ժողովրդի մէջ. չէք հաւատում, կարդացէք „Գէորգ Կրաբերը“ և կըհամոզուէք: Եթէ այս գրքոյկը սիրտ անէ ու կարդայ մեր թեորուս քահանաներից մէկը, մենք հաւատացած ենք, (եթէ նրա մէջ զղացմունքը մեռած չէ) նա կըզգայ իր ոչընչութիւնը իր կոչման բարձրութեան առաջ: Այս թարգմանութիւնը բաւական լաւ է. թարգմանչուհու ամենայաջող ընտրութիւններից մէկն է: Նա զգում է տգիտութեան վնասը, մանաւանդ առաջնորդող դասի. նա իր թարգմանութեամբ լաւ ապտակ է տալիս տգէտ համբակներին, որոնք պաշտպան են տգէտ քահանաների, նա հասկացնում է թէ ինչ է նշանակում ուսեալ, կրթւած քահանան: Ուսեալ և բարեկիրթ քահանաների թիւը մեր մէջ՝ մատնահաշիւ կարելի է անել, իսկ տգէտների ցանցը ամբողջացրէս պատել է թշւառ Հայաստանը: Այո, շատ ուրախալի և ցանկալի կըլինէր տեսնել գոնէ մի քանի տասնեակ Գէորգ Կրաբերի նման քահանաներ մեր կեանքում-մեր հայրենիքում հա:

12. «Մրցումն». Երկու ընկերներ, որոնք միմեանց շատ սիրելիս են լինում, և դրանցից մէկը աղքատ, միւսը հարուստ, երկուսն էլ նկարչական դպրոցում սովորում են—պէտք է մրցեն, բայց մրցումը չի կայանում. որովհետև հարուստ ընկերի հոգու մէջ մրցումն է կատարւում, մրցողներն են՝ ընկերասիրութիւնը և փառասիրութիւնը. յաղթում է ընկերասիրութիւնը և նկարչական մրցումը չի կայանում. հետեւանքը բարի է. երկուսն էլ վարձատրւում են հաւասարապէս: Այս գրւածքի գլխաւոր տիպերը հէնց այդ երկու լաւ ընկերներն են: Մենք կարծում ենք՝ չըկայ մարդ որ չաչխատէր ունենալ սրտակից, մտերիմ, լաւ—ընկեր. ով դիտէ, գուցէ սլատահեն և այնպիսիները, որոնց համար միայնութիւնն աւելի դերադասելի է, բայց այդ տեսակներին մենք կըկրկնենք մարգարէի հետևեալ խելօք խօսքերը՝ «վայ միոյն, եթէ անկանիցի ո՛ բարձրացէ զնա»: Լաւ ընկերը ամեն ժամանակ էլ կարող է մէկին օգնական լինել զանազան բաներում: Այս գրքոյկը շատ խրատիչ է թէ հասարակաւորների համար և թէ մանուկներին:

Վերջացնելով գրքերի տեսութիւնը, մենք մի քանի խօսք կաւելացնենք նրանց արտաքին արժանաւորութեանց մասին:

Նախ լեզուն. լեզուն բաւական մաքուր, ազատ խրթին բառերից և հասկանալի ոճով է թարգմանւած,

խոթթ ու բորթուբթիւննէր քիչ կան։ Դժբախտաբար տպագրական սխալ-ներն անպակաս են, ի հարկէ դա էլ սրբագրողի յանցանքն է։

Գնի մասին նոյն իսկ խօսք անգամ չի կարող լինել. բոլորն էլ շատ արժան. 5-կոպէկից բարձր չէ նշանակւած։

Գրքոյկները անպայման օգնականր են, հարկաւոր է մտածել տարածելու մասին, թէ ժողովրդի և թէ մանուանդ դպրոցների մէջ. նրբաքանչիւր դպրոցական գրադարանի դարդերից մէկը կարող են լինել այդ թարգմանութիւննէրը։ Գիւղերում ուր դպրոցներ կան, պէտք է աշխատեն տարածել մեր գիւղական ուսուցիչները. չըպէտք է պղտնան տարածմանը նպաստել և ձեռնհաս անձինք։ Թարգմանչուհին զղջյ է վերաբերուել դէպի գործը, նա շատ հարցեր է չօշափում մեր կեանքից իր թարգմանութիւններով։ Թարգմանիչ լինելու համար, բաւական չէ լեզուներ իմանալը. ամենաքիչը պէտք է երեք պահանջին բաւականութիւն տայ թարգմանիչը— նախ՝ ընդհանուր ծանօթութիւն առհասարակ մարդկութեան մասին, ապա իր ազգի ծանօթութիւնը, և երրորդ լեզու գիտենալը։ Ներկայացնէք, որ Տ. Կ.-նը մեր կեանքին քիչ թէ շատ ծանօթ չը լինէր, բնբռնւած նրա թեքի կողմերը, ինչ էք կարծում, մի՞թէ նրա թարգմանութիւննէրը յաջող կարող էին լինել, ի հարկէ ոչ. նա կարող էր վերցնել օտարից այն, ինչ որ օտարի համար անհրաժեշտ է, մինչդեռ մեր կեանքին ներկայումս դա նոյն իսկ անժամանակ է։

Այսքան գրաւական ունենալով, չենք սխալւի, եթէ ասենք որ թարգմանչուհին չի դադարել այդ տեսակ թարգմանութիւններ մատուցարարել մեր ժողովրդին և մանուկներին։ Յանկանում ենք նրան միշտ առոյգութեամբ առաջ ընթանալ իր ընտրած թարգմանական ասպարէզում։

Նիկ—ԱՈՓ.

ՄԻ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿԻ ԴՊՐՈՑ

Օդեսայում բացւում է մի իգական դպրոց, որ ուսումնական գործի մէջ մի նորութիւն է մտցնում։ Այդ նոր տեսակի դպրոցի առանձնայատկութիւնները հետեւեալն է.

Ամառւան արձակուրդները երկարացրած են և պիտի չարունակւեն մայիսի 10-ից մինչև սեպտեմբերի 20-ը։ Տարեկան հարցքննութիւնները վերանում են, և միայն մնում են ընդունելութեան և աւարտման քննութիւնները։ Ամբողջ ուսման դասընթացը բաժանւած է երկու ուրոյն բաժինների— տարրական և սիստեմատիքական դասընթացների, իսկ դասատուութիւնը պիտի լինի համակենդրոնական ձեւով։ Տարրական դասընթացը տեւում է 6 տարի. սիստեմատիքականը 3, իսկ ամբողջ դասընթացը պարապում է օտար լեզուների ուսումնասիրութեամբ, այն է ֆրանսերէն, գերմաներէն և անգլիերէն. միւս առարկաները աւանդւում են տարրական ձեով և ամեն մի դասը՝ թէ աշխարհագրութեան, թէ թւաբանութեան, թէ պատմութեան և այլն, աւանդւում է օտար լեզւով, գործնականապէս այն լեզուն ուսումնասիրելու նպատակով։ Իսկ մատեմատիկայի, ֆիզիքայի, բնագիտութեան և այլ գիտութիւնների գիտնական դասատուութիւնը կատար-

ւում է սիստեմատիքական դասընթացի ժամանակ, երբ անցնում են և ուրիշ նոր առարկաներ՝ ընդհանուր գրականութեան պատմութիւն, պատմութիւն մանկավարժութեան, իտալական լեզուն և նրա գրականութիւնը, հանրամատչելի աստղաբաշխութիւն և այլն։

Աշակերտուհիները մնում են դըպրոցում մինչև ժամի 5-ը և աւելի չատ. այստեղ նրանք վարժուհու •գնութեամբ պատրաստում են հետևեալ օրւայ դասերը, այնպէս որ կարող են գնալ տուն առանց դրքերի և դասական ուրիշ առարկաների։ Ուսման դասամիջոցը $2^1/_2$ ժամ է, որ գործ է դնւում ճաշելու, հանգստանալու և զբօսանքի համար։

ՓՈՇՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԲՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Վերջին ժամանակները փոշու. դէմ պիտնականները չատ են գրել, ցոյց տալով նրա վնասակար յատկութիւնները։ Նոյերումս գերմանականGartenlaube ամսագրում լոյս տեսաւ մի ընդարձակ յօդուած, ուր ցոյց է տւած նրա վնասակարութիւնը չնչառութեան գործարաններին և իրրև վտանգաւոր հիւանդութիւնների, հաշւում է նմանապէս և նրա տւած բարիքները։ Եթէ փոշին չլինէր, որ ցրում է լոյսի ճառագայթները, մարդիկ չէին կարող զմայլւել երկնքի կապուտակութեամբ և լոյս չէր լինիլ այնտեղ, ուր արևի ճառագայթները ուղղակի չեն ընկնում։ Բարակ փոշին թափանցում է միայն կապոյտ ճառագայթները, մինչդեռ—դեղին և կանաչ, իսկ մեծ փոշինները բացառապէս կարմիր ճառագայթները։ Երկնքի կապոյտ լինելու պատուորութիւնը մեր տեսողութեան տալիս է ամենաբարակ փոշին, որ ցրւած է օդի բարձրագոյն շերտերում և ցոլացնում է լոյսի կապոյտ ճառագայթները։ Երբ քամին չարժողութեան մէջ է ձգում փոշու մեծ կտորները, երկինքը մոխրի գոյն է ստանում։ Ծխախոտի ծուխը երբ բարձրանում է, կապոյտ գոյն ունի, իսկ ծխողի բերանից դուրս եկող ծուխը մոխրագոյն է։ Այդ նրանից է, որ ծխի կտորները՝ փոշու կտորների նման, խոնաւանալով բերանի խորշում, ծաւալում մեծանում են և չեն կարողանում ցոլացնել կապոյտ գոյնի ճառագայթները։ Այս վերջին հանգամանքը ցոյց է տալիս այն նշանաւոր դերը, որ խաղում է փոշին մթնոլորտի երևոյթների ժամանակ։ Առանց նրան մարդիկ չէին ճանաչիլ անձրևը, որովհետև այժմ արդէն ապացուցած է, որ ջրային գոլորշիները բացառապէս խտանում են օդի մէջ ցրւած փոշիների չնորհիւ։ Պէտք է ի նկատի ունենալ, ինչպէս բացատրում է Gartenlaube-ի յօդւածի հեղինակը, որ ջրի ոչ մի կաթիլը չէ ընկնում դեռևի վրայ ոչ այլապէս, եթէ ոչ խտացած փոշու չուրջը, իբրև նրա միջուկը։ Եթէ օդի մէջ փոշին չըլինէր, չէին լինիլ ոչ ամպերը, ոչ մառախուղը, ոչ անձրևը, ոչ երկնքի կապուտակութիւնը, ոչ արևի վայելուն մայր մանեակը՝ իրանց հազարերանգ գոյների խաղերով և օդի մէջ դռնւած ջրային գոլորշիները չարունակաբար կընստէին երկրագնդի, մարդկանց, տների, ծառերի և այլ առարկաների վրայ։ Այս դէպքում երկրագնդի վրայ կըստեղծուէր անտանելի խոնաւութիւն և մարդկանց հագուստը ջրով բոլորովին ծծւած կըլինէր։

ՀԱՅՐ ՂԵՒՈՆԴ Վ. ԱԼԻՇԱՆԻ
ՄԻ ՆՈՐ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆԸ
«ՀԱՅԿԱԿԱՆ ԲՈՒՍԱԲԱՌՈՒԹԻՒՆ»

Համառօտ խորհրդով՝ բայց հըմտալից և ճոխ պարունակութեամբ

ընտիր երկ մի։ Ուշիմ ընթերցողք պիտի տեսնեն այս խորագրիս ներքև 3400-էր աւելի հայ և հայացեալ բուսեղինաց ծանօթ և մեծաւ մասամբ անծանօթ անուններ, զորս ամենայն խնամքով և օրի նակելի տակաւնութեամբ՝ Նախնեաց թէ ձեռագիր և թէ տպագիր, նոյնպէս նաև՝ թէ տպագային և թէ օտարազգի մեր երկրի բուսաբերութեան վրայ հին և նոր գրողաց և քննողաց գրւածքները կարդալով հաւաքեր է ալեզարդ ծերունին, և հուսկ ուրեմն ի գլուխ հաներ այդ տաժանելի Գործը։

Սոյն գրքի մէջ պիտի տեսնեն ընթերցողք ամեն բուսոց առանձին նկարագիրն՝ ըստ տեսակին և ըստ ձևոյն, ըստ բժշկական օգտակարութեան և երբեմն նաև ոմանց, (ըստ աւանդական գրուցոց) դիցաբանական առասպելքն, և այլն, և այլն։ Կրնանք ըսել թէ՝ ռամիկն, տնկագործն և տնկաբանն, բժիշկն և դեղագործն, ամենն այլ լիուլի կրգտնեն իրանց բաժինն այս գրւածոյս մէջ։

Գիրքն կըսկսի հմտալից, դեղեցիկ և երկայն Յառաջաբանով մի, ամբողջն կազմւած է 44 ութածալ թերթերէ (698 երես), 150-ի չափ բուսոց ձևերով։—Բուսոց անունները դրւած են թէ հին և թէ նոր կոչմամբ՝ և ըստ այլևայլ տեղեաց և գաւառաց զանազան հնչմամբ, և գրեթէ ամեն բուսոց հայերէնին առջև դրւած են Ցոյն, Լատին, Փռանկ, Ռուս, Թիւրք և Արաբ բառերն ևս։ Կան նաև կրկին Յաւելւած բառից և Շալակ և ի դիւրութիւն բանասիրաց ի վերջոյ Յանկ լատին և վռանկ անուանց բուսոց ըստ Թւակարդի, և Յանկ Թիւրք և արաբ անուանց բուսոց։

Դիտէն է անհրաժեշտ կ ա ն խ ի վ ճ ա ր մ ա մ բ հանապարհածախսոլի միասին՝ Թիւրքիոյ համար ոսկեդրամ 8 փռ.—իսկ Ռուսաստանի համար 3½ ռուբլի։

Ստանալ ցանկացողք կրնան դիմել հետևեալ մեր տպարական հասցէին՝

Direction de L'imprimerie
Arméniene
VENISE St. LAZARE

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Պատմ (բանասեղծ.)—Սրբենգի։ Ա. պնլ ը ընկերը (ժողով. առակ) —Մաթ-Շեմնկի։ Շնեիկին հլ լողացնելը... (պատկերը)։ Ա. շ ու ղ ե ն—Պ. Մռաճուհեանց։ Սարուխնեը (շարունակութիւն)—Յաղ. Թումանեանցի։ Մ ր ց ա ն ա կ III (պատկերը)։ «Դ ա շ տ ա յ ե ն և Ջ ե ր մ ա ն ո ց կ ծ ա ղ ի կ» (շարունակ.) Բ ե ջ ե ր Սաուս—օր. Ն. Նախիջևանի։ Ա. բ ժ ա ն կ պ ա տ կ ե ր (I մրցանակի բացատրութիւնը)—Մաթ-Շեմնկ։

Հ Ն Տ Ա Ք Ր Ք Ր Ա Կ Ա Ն

Հակայ-մանուկ։ Օգի բարեխառնութիւնը քաղաքներուս։

Ջ Ի Ա Ր Ճ Ա Լ Ի Ք

Հանելուկներ և բացատրութիւն «Ազբիւրի» № 2-ի հանելուկներուն։

Բ Ր Ա Ծ Ի Ն

Մասնախօսութիւն. Տիրուհի կոստանեանցի վ ո ք ը կ ի Թ ա ղ ո ր ն ո ւ թ ի ւ ն ն ը ը։ Մի առանձին տեսակի դպրոց։ Փոշու նշանակութիւնը բնութեան մէջ։ Հ. Ղ. Վ. Ալիշեանի մի նոր աշխատութիւնը։

Ժամանակատու խմբագիրը ԱԼԷՔՍԱՆԴՐ ՄՈՎՍԻՍԵԱՆ
Հրատարակիչ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

1895 ԱՂԲԻՒՐ եւ ՏԱՐԱԶ 1895

XIII-րդ տարի VI-րդ տարի

ԱՂԲԻՒՐ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԱԳՐԻ ԾՐԱԳԻՐԸ

Ա. մանկական բաժին. Մանրավէպ, զբոյց, հեքեաթ, ճանապարհորդութիւն, կենդանաբանութիւն, բանաստեղծութիւն, պիտանութիւն եւ ասեղոյս, նոր-նորութիւն, այլ եւ այլն:

Զանազանութիւն. Մանկական, փրեօբրէլեան, շախմատ եւ այլ խաղեր, բնաբուծ, թուաբանական խնդիրներ, անեկդոտ, հանելուկ, շուտասելուկ, երգեր նոտաներով.

Բ. բաժին. կրթութիւն եւ դաստիարակութիւն վերաբերեալ յօդուածներ եւ տեղեկութիւններ: Առաջարկութիւններ: Խորհուրդներ: Մատենախօսութիւն եւ նոր գրքեր: Խառն լուրեր, պատասխաններ, յայտարարութիւններ:

ՏԱՐԱԶ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԾՐԱԳԻՐԸ

Դեղարուեստ եւ դիտութիւն: Պատմական, ժամանակակից վէպ եւ պատկերներ, ճամբորդական գրուածներ: Բանաստեղծութիւն: Քննադատութիւն, կենդանաբանութիւն. Կար, ձեւ, ձեւազարդ եւ ամէն նորութիւն աշխատանքի վերաբերեալ: Տնային արդիւնաբերութիւն, անասնաբուծութիւն, ճանապարհորդութիւն եւ արհամարհ: Նամակատուութիւն եւ ծանուցումներ: Լուրեր, Տեղեկութիւններ, յօդուածներ եւ այլն: Ֆելիետոն, դպրոց, առած, հատուկ: Շախմատ եւ այլ խաղեր, Բերդուս: Հարցեր, խորհուրդներ: Այլ եւ այլք: Սուբհանդակ, յայտարարութիւններ:

Անմիջական եւ սերտ յարաբերութիւն ունենալով Եւրոպայում կրկէ պատրաստող նշանաւոր գործարանների հետ, մենք արդէն կարելի ենք դարձրել մեր թերթերում բաւական արագութեամբ տպագրել օրւայ հարցերի, դէպքերի հետ համարեա զուգընթաց եւ նրանց վերաբերեալ նկարներ, տեսարաններ, պատկերներ: Բացի այն որ ՏԱՐԱԶԸ ընթերցանութեան չատ նիւթ է տալիս բնեւտութիւնայից, պտոյտ էջեր չեն զարդարում եւ կրթութիւնը քաղուում են հատուածներով, գեղարուեստն ու դիտութիւնը քաղուում են հատուածներից մեր մասնագէտ աշխատակիցների ձեռքով:

ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻ 1895 Թ. ՊՐԻՄԻԱՆԵՐԸ ԵՆ

ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶ մինոյն հասցէով առաքուում է եւ 60 կ. պտոյտ մարկանոց ուղարկելով բաժանորդագրութեան հետ առանձ խնդրի հինց առ այնի պտոյտով հետեւեալ 8 ՊԱՏ. 1) ՌԱՖԱՅԷԼԻ Դրէզդենեան Գալերէի ՄԱԴՈՆՆԱՅԻ եւ ՀՐԵՇՏԱԿՆԵՐԻ վերբերեալ պատմէնները լուսանկարեալ ՁՈՒՅՑ պատկեր: 2) ՐՈՒԲԻՆՍՒ ՅԻՍՈՒՍ եւ ՏԻՐԱՄԱՅՑ լուսանկարեալ 3) ԲԵՐԿԱՆԱՐ, մի շատ գեղեցիկ լուսանկարեալ պատկեր: 4) ՇԼՅԱՊՈՒԻՐԻ ՐՕՄԱՆՑՈ եւ ՋՈՒԼԻԵԹ տպագրեալ մի մանկական նկար լոյսի դէմ խմբերու, կարող է լինել եւ շրջ պ էկրան ձրագի, լամպի դէմ: 9) Ծանօթութիւն «ԵՐԿՈՒՇՔ IX դարու» Սասունի հերոսների պատմական վէպ, մօտ 500 էջեա, վերջինս պտոյտ ծախսը ծանրագրանքի վրայ է:

ԱՂԲԻՒՐԻ տարեկան գինը 3 ր. (արտասահմանից 4 ր.):

ՏԱՐԱԶԻ տարեկան գինը 6 ր. (արտասահմանից 10 ր.)

Հասցէն՝ Тифлисъ, ред. жур. „Агбюръ“ կամ „Таразъ“. Tiflis Réd. du jour. „Agbur“ կամ „Taraz“.